12004

241
Մ-58
5035-ահ 1054 ԱԿ
Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ
Նոր. 18

[ARMENIAN.]

Miscellaneous.] [No. 18.

# THE PROGRESS OF SIN.

# ՄԵՂՔԻ ՄԵԾԱՆԱԼՈՅՆ ԵՒ ԶՕՐԱՆԱԼՈՅՆ ՀԱՄԱՐ

2691-71

Թարգմանութիւն

Առաջին անգամ տպեալ Յամի Տեառն 1833
ԻԶՄԻՒՌ

Նոյն տպեալ 'ի Տպարանի Մկրտող Միսիոնարաց 'ի Կալկաթայ
վասն Ամերիկեան Հաւատոյ Տետրակների ժողովքին
1841.

# ՄԵՂՔԻ ՄԵԾԱՆԱԼՈՅՆ

ԵՒ

## ԶՕՐԱՆԱԼՈՅՆ ՀԱՄԱՐ

Երբ որ մեր Փրկիչն ասում էր, թէ ինքն է նա որ ամէն մարդ ազատ է անում: Յովհ. Ը. 32. 33: Հրէաները տրտնջում էին նորանից։ ինչու որ՝ կարծում էին թէ ծառայ չէին. և սրա համար նորանց ամբարտաւանութիւնն շատ շարժվեցաւ և նեղացաւ Քրիստոսի ասելուն. թէ ծառայ էին: Եւ իրաւ որ ծառայ էին. և էսպէս էլ ամէն մեղաւոր մարդ ծառայ է, թէ և ինքն իսկի չի իմանում. մինչև որ Քրիստոս ազատ անէ նորան: Եւ որքան երկար ժամանակ որ նա էս վիճակիս մէջ մնայ, էնքան էլ նորա կապանքներն պինդ և սաստիկ են լինում և ինքն տկար և անկարող է դառնում որ շատ դժուար դուրս գայ և ազատութեանն հասնէ: Մեղքն մին էնպէսի սաստիկ տէր և մեծաւոր է, որ իրան ծառաներին իսկի հանգիստ չի տալիս, բայց միշտ և անդադար վռազ անելով տանում է նորանց մին բանից մէկել բանի մէջ, և էնքան երկարացնում է իրան իշխանութիւնն մինչև որ՝ մարդոյն մահի մէջ հասցնէ: Մեղքի ճանապարհն էնպէսի ճանապարհ է, որ նորանում անկարելի է հանգիստ կանգնիլ՝ դադարիլ և միտք անել. Ինչպէս որ մին մարդ որ մին բարձր սարից դէպի ցած կողմն է գնում. իսկի չի կարող դադարիլ՝ բայց ամէն մէկ քայլով (ոտքով) աւելի շուտ առաջ է վազում. մինչև որ սարի ցած կողմն հասնի: Հէնց էս մտքովս սուրբ առաքեալն գրում է թէ դուք ծառայ էիք անօրէնութեանն անօրէնութիւն գործելոյ համար:

Անօրէնութեան ծառայ լինելն անդադար և անվերջ մեղաւորի ճշմարիտ և յատուկ վիճակն է: Ուղորդ է որ ամէնքն հէնց մին կերպ մեղքի չեն ծառայում: Մինն կայ որ իրան անձն մատնում է հարբեցողութեան, մէկելն պղծութեանն, մէկելն նախանձու, մէկելն արծաթասիրութեանն, և կամ ուրիշ գարշելի մեղքերին. բայց էս ամէնս մէնակ մեղքի իշխանութեան զանազան կերպարանք են, որ մարդկանց կերպ կերպ բնութիւններին պէս հնարված և կարգված են: Բայց հէնց էն ամէնքըն էլ ծառայ են անօրէնութեան, և ամէնքն որ մեղքին ծառայելուց չեն դադարում, օրէցօր բանդադառնում են որ իրանց գործոյ մէջն առաջանան. իբր անօրէնութեան ծառայք անօրէնութիւն գործելոյ համար: Մեղքի էս առաջանալն և զօրանալն մենք հիմիկ աւելի յայտնի ցոյց կըտանք էս հետևող խօսքերովս:

Ա

Ամէն ով որ իրան անձըն ծառայ է մատնում մեղքին ինչ կերպով որ լինի, նա ընդունում է էն կանոնըն և խորհուրդըն՝ որ ամէն մեղքի համար ճանապարհէ պատրաստում։ Էս կանոնս և խորհուրդս են է՝ որ պէտք չէ Աստուծոյ օրէնքին և կամքին մտիկ անել, ինչ ժամանակ՝ որ նա մեր ցանկութիւններին հակառակ է կենում։ Եթէ դուք էս կանոնըս ընդունիք, ապա իսկի մին բան չըկայ որ կարենայ խափանել և յետ քաշել ձեզ էն չար բաներիցն որ ձեր սիրտըն ցանկանում է նորանց։ Կարելի է որ դուք ամէն չար և գէշ գործք չըկատարէք, բայց եթէ ձեր հոգին էնպէսի մտածմունք և խորհուրդ ունի, ապա ոչ թէ Աստուծոյ վախին, բայց մէնակ մարդկանց երեսպաշտութիւնն կամ ձեր շահի և կամ ձեր փառքի սէրն խափանում է ձեզ. որ չար գործ չըկատարէք։ Օրինակ ասեմ։ Եթէ դուք մին անգամ ձեր անձներին թոյլ տաք որ գողութիւն անէք, ապա հէշտ կը լինի որ էն անհոգութեանն շնութիւն, յափշտակութիւն կամ սպանութիւն էլ գործէք եթէ նորանցով փորձվիք և յոյս ունենաք՝ որ պատժից փախչէք։ Հէնց էսպէս է լինում որ նա որ Աստուծոյ մին պատուիրանքըն քանդում է, էլ ամէն պատուիրանքներըն է քանդում պատճառն որ՝ հէնց էն աստուածն. որ մին մեղք խափանում է, հէնց ամէններըն էլ խափանում է. և նա որ յանուր կամք հէնց մին բանի մէջ նորա դէմ մեղանչում է, նորա իշխանութիւնըն և օրէնքըն հէնց էնպէս դէն է քցում. ինչպէս որ նա՝ որ շատ անգամ ամէն բանի մէջ անհնազանդ է։

Էլ եթէ Աստուծոյ վախին մեր անձներըս չըբռնէ և կառավարէ, ապա մարդկանց վերայ մտիկ տալն իսկի բաւական չէ որ մեզ մեղք գործելուցն յետ քաշէ։ Պատճառն որ՝ առաջ շատ անգամ և շատ կերպով կը լինի որ ծածուկ մեղք գործենք, բայց ծածուկ գործած մեղքըն շուտով պիտի դուրս գայ և յայտնի խայտառակութիւն դառնայ. ինչու որ՝ մարդըն իրան ամէն հնարքներումն և աչ խոստմունքներումն չի կարող որ իրան հոգոյ յատուկ բնութիւն և տիրապետող ցանկութիւնըն երկար ժամանակ ծածկէ։ Երբ որ Սաւուղ թագաւորն մին անգամ Աստուծոյ օրէնքն դէն քցեց նորանով որ ամաղեկացոց ազգըն Աստուծոյ կամքին պէս չըպատժեց՝ ապա նորա միտքըն ամէն կերպ չարութեան մէջ ընկաւ. նախանձով ատելութեամբ և չար կամքով լցված շատ անմեղ մարդկանց սպանեց. խորհուրդ անելոյ համար կախարդ կնկան մօտ գնաց և վերջն ինքն իրան սպանելով իրան ողորմելի կեանքըն վերջացրուց։

Բ

Ամէն մեղք որ կատարումենք, թէ շուտնում է մարդոյ էն զգուշաւոր կամքըն. որ նորանով կամենում է մեղքին հակառակ կենալ, և

էնպէսի անհոգութիւն է ծնում, որ ամէն յոյս կորուսի։ Հոգոյ որբութիւնն նման է մարմնաւոր յատկութեանն որ յիստակ շորերով երևում․ ինչու որ շարժում մարդոյն՝ որ ամէն բանից հեռանայ՝ որ կարենայ պղծել իրան միտքն կամ հոգին․ բայց երբ որ մին անգամ մեղքի ծառայութեան մէջ ընկնինք․ էն ժամանակն էս զգուշութիւնս և ջանք անելն կորչում։ Էն երեխան որ միշտ պատառուած և կեղտոտ շորեր է հագնում, ինքի ամօթ չունի և ինքի հոգս չի անում․ որ իրան շորն յիստակ լինի։

Երբ որ մարդն առաջին անգամն մեղաց մէջն է ընկնում, էն ժամանակն նորա խղճմտանքն շատ հակառակում և տանջում նորան։ Ապա կարելի է որ նա միտք անէ՝ թէ ես ինքի մին ժամանակ մին էլ մեղք չեմ գործիլ, բայց երբ որ փորձութիւնն նորոգվում և մին էլ գալիս է և նորան հակառակ կենալոյ պատճառներն թուլացնումեն․ ապա մարդն շատ հեշտ թալանի պէս փորձողի ձեռքն է ընկնում։ Ապա խղճմտանքի ձայնն և յանդիմանութիւնն ասս է լինում, նորա սիրան քարանում և պղնտանում։ Նա առում իրան մտքումն թէ յոյս չըկայ․ ինչու որ՝ ասար ճանապարհ միրեցի․ որա համար կըցնում հիմիկ նորա վերայ։ Էն առաջին ներս պրծած փորձանքների մէջն ասաց․ թէ մինչև էստեղ կըցնամ, և էլ աւելի հեռու չեմ գնալ․ բայց հիմիկ էն ամէն խոստմունքներն ոչ ինչ են համարվում։

Պզտիկ ճանճն երբոր բոլի սարդի ոստան մէջն ընկնի, ինքի մին բան կարող չէ անել իրան անձն փրկելոյ համար․ բայց նորա ամէն ջանքն միայն նորա թեթև թեւերըն էլ աւելի կապում և իրար խառնում և նա մին քանի ժամանակ հակառակելուց ետև իրան ազատութենից և իրան կեանքից զրկվում։

Գ․

Ամէն մեղք, որ կատարումենք, ոչ միայն հակառակ կենալոյ զօրութիւն է թուլացնում, բայց էլ աւելի մին անկարգ ցանկութիւն է ծնում մեզանում, որ էն մեղքն մին էլ գործենք և կատարենք։ Էս բանըս կարող ենք զօրքի նմանացնել․ պատճառն որ՝ երբ որ նորանից մին մաս թշնամեաց մօտն է անցնում, մենք բռնադատվումենք որ երկու տակ նեղութիւն քաշենք․ առաջ նրա համար է, որ մենք ինքներս տկարանումենք․ և երկրորդ․ նրա համար որ թշնամիք-ներն զօրանումեն։ Ահա հենց էնպէս էլ մեղքն՝ որ մին անգամ կատարումենք՝ թուլացնում մեր հոգոյ զօրութիւնըն․ և զօրացնում մեր մեղաւոր ցանկութիւններըն․ ինչպէս որ շատ յայտնի հարբե-ցողութեան արծաթասիրութեան և անառակութեան և սրանց նման մեղքերի մէջն տեսնումենք։ Մեղքն առ հասարակ խաբում մեզ էն սուտ խոստմունքովն որ եթէ մենք միմիայն համար նորա կամքն կատարենք՝ էլ աւելի բան չի ուզիլ մեզանից կամ թէ հաւատացնում

իրան խաբված ծառաներին թէ մեղքին հնազանդ լինիլն կըթեթևացնէ ցանկութիւնների տանջանքն ։ Ուղորդ է որ էդ բանը մին ժամանակ էղպէս լինի , բայց մեղքն չի ուշանալ , այլ երկու տակ զօրութենով յետ կըդառնայ ։ Որքան որ հնազանդ լինինք նորան էնքան էլ աւելի սաստիկ հրաման է տալիս մեզ . և օրէցօր նոր բան է խնդրում մեզանից ։ Նա որ մին անգամ կորուստի ճանապարհից գնացել է , կարող է փորձառութենով ասել՝ թէ հազար տակ էլ աւելի դժուար է յետ դառնալ , քան թէ սկզբումն էս ճանապարհիս մէջ ինկի չի մտնել ։ Տղրկի ( [illegible] ) ծարաւութիւնն արիւնի համար , կամ հարբեցող մարդոյն գինոյ համար . շատ ակնար պատկեր է էն հոգոյ կըրակով վառված ցանկութիւններին երևացնելոյ համար , որ մեղաց ճանապարհումն և ծառայութենումն է կենում ։

Դ.

Եթէ մենք մեր անձներիս թոյլ տանք որ հէնց միայնակ մին մեղք գործենք , ապա շուտով կըբռնադատուինք որ ուրիշ մեղքերի մէջն էլ ընկնինք . էն առաջվան մեղքն ծածկելոյ և կամ թողութիւն ստանալոյ համար ։ Էդ ճշմարտութիւնը էնքան յայտնի է որ ինկի պէտք չէ լայն ցոյց տալ և հաստատել նորան . թէ սուրբ գրքերն և թէ հէնց մեր հասարակ կենցաղավարութիւնն սրա համար շատ օրինակներ մեր առաջիս է դնում ։ Երբ որ մեղքն կատարվեցաւ . ապա առաջին բանն՝ որ մեղաւորի միտքն է գալիս էն է՝ որ ջանք անելով իրան մեղքն ծածկէ կամ թէ որ ծածկելն անկարելի է որ պատճառներ հնարելով էն մեղքն ներելի շինէ ։ Առաջին մարդ-ադամն մեղք գործելուց ետև ջանք արաւ որ ծառերի միջումն թաքչենայ , բայց երբ որ չըկարողացաւ աստուծոյ երեսից ծածկվիլ , էն ժամանակն նա սկսեց մեղքի պատճառն էն կնկան վերայ դնել , որ աստուած տուաւ նորան՝ ասելով թէ նա ինձ փորձութեան մէջ գցեց ։ Հէնց էնպէս էլ դաւիթ թագաւորն օրինակ է մեզ համար ։ Երբ որ նա մեծ մեղք գործեց առաջ հնարք ուզեց՝ որ էն իրան մեղքն ծածկէ . և երբ որ չըկարողացաւ ծածկել . մարդասպանութիւն գործեց ։ Ահա հէնց էսպէս էլ էս օր է լինում . նա որ մին մեղք է գործում . շուտով կըբռնադատուի որ էլ ուրիշ մեղքի մէջ ընկնի ։

Ե.

Ամենն մէկ մեղք որ գործումենք՝ մեղաւոր սովորութիւն է ծնում մեզանում , կամ եթէ էս սովորութիւնս հէնց առաջ մեզանում կար , հաստատումէ և զօրացնումէ նորան ։ Եթէ մենք մեր ամենն մէկ մեղաւոր գործքին ջոկ ջոկ մտիկ անենք , նորանք նմանըլումեն ջրերի կաթիլներին՝ որ շատ քիչ զօրութիւն ունին , բայց երբոր նորանք

սովորութիւն են դառնում, էն ժամանակն նմանվումեն շատ սաստիկ վարար գետի, որ նորան խեկի մին բան չի կարող դէմ կենալ։ Հար-բեցող մարդն առաջուց յատուկ ծարաւութիւն չունի հարբեցնող խմելիքին համար. և կարելի է որ աչ խարշոնկան սրտամութիւնն կամ ունայն ընկերութեան սէրն առաջ շարժեցին նորան որ թեթևամիտ և խմող մարդկանց հետ նստի. բայց երբ որ խմիլն սովորութիւն է դառ-նում և նորանում զօրանում է, ապա հարբեցողութեան խեղճալի ծառայ է լինում։ Թէև և նա տեսնումէ՝ որ օրէց օր իրան ապրանքըն փչանումէ, կեանքըն կարճանումէ և հոգին կորչումէ. բայց չի կարող գինին կամ արաղըն թողել՝ այլ օրէցօր աւելի ցանկանումէ նորան։ Արծաթասէրն կամ ագահն առաջուց փողին և ապրանքին անչափ ցանկութենով չի հետևում. բայց երբ որ մին անգամ սկսեց իրան անձըն արծաթի սիրոյն մատնել՝ խապա նորա ծառայ է դառ-նում. և ամմէն չար հնարք գործ է ածում. որ մէնակ փող հաւաքէ։ Նա խաբումէ և սուտ երդում է ուտում և աղքատներին զրկումէ՝ մէնակ նրա համար որ փող ստանայ։ Գիշեր և ցերեկ հոգս է անում որ ինչ կերպով որ լինի իրան ապրանքի ցանկութիւնըն լցնէ. և սրա համար խեկի հանգիստ չի գտնում։ եթէ մին բան կորցնէ՝ մին անհնա-րին տրտմութիւն բռնումէ նորան՝ և նորա ողորմելի կեանքըն կարճանումէ և շատ անգամ էլ վերջանումէ։ Կարելի է որ ամմէն մէկ անառակ այիրծ և պոռնիկ մարդն՝ առաջուց պարկեշտ մարդ եղած լինին։ Նորա անառակութեան և պղծութեան սկիզբն մէնակ էն էլաւ. որ թեթևամտութենով և անհոգ բարեկամութենով մին կընկան հետ վարվեցաւ։ Բայց երբ որ նա պարկեշտութեան և սրբու-թեան սահմանիցն մին անգամ դուրս եկաւ ապա իրան ցանկութիւն-ներին խեկի սահման չի դնում։ Նորա աչքերն լիքն են պոռնկութենով. և չի կարող մեղքից դադարել։

Զ.

Երբ որ մեղաւորն էնպէս մեղաց ճանապարհումն յիմարված և թմրած է, ապա իրան բնական սովորութենիցն ջոկ ուրիշ կապանք-ներով և բաներով էլ պատվումէ. որ նորան էլ աւելի մեղքի մէջ թողումեն, և վերջն խապա կորուսի մէջ կըգցեն թէ որ աստուած իրան անսահման ողորմութենովն չըփրկէ նորան։ Նա իրան նման մարդկանց հետ կապակցութիւն և ընկերութիւն արաւ. և հիմիկ նորա օգուտն և շահն խընդրումեն որ նորանց հետ միաբանված մնայ։ Այսպէս ինչպէս պիտի ազատվի էս ծանր լծիցն։ նորա ընկերներըն կըսատեն և կըպատմեն նորան. և աչ խարշքն կըծիծաղէ նորանով։

Շատերըն կան որ էսպէսի ողորմելի վիճակի մէջըն՝ իրանց խղճմտան-քովն շատ շարժվեցան. և շատ արտասունք թափեցին, և անկեղծ խոստովանութենով ճշմարտանդ ցանկութիւն ցոյց տուին որ իրանց

չար ճանապարհներից հեռանան և յետ դառնան , բայց երբ որ սկսեցին յետ դառնալ , շատ մեծ մեծ արգելմունք և խափանմունք գտին ։ որովհետև մին անգամ սկսեցին մեղքին ծառայել և նորա մէջ թաղվիլ՝ ապա հիմիկ չեն կարում նորանից հեռանալ և յետ քաշվիլ թէև իմանումեն՝ որ իրանց վերջն անպատմելի չար և ողորմելի պիտի լինի ։ Ո՛վ կարդացող մի թէ դու էլ էսպէսի վիճակի մէջ ես ։

Ներիր և թող տուր ինձ , վո բարեկամին՝ որ յայտնի և համարձակ խօսիմ քեզ հետ ։ Հաստատ իմաց որ առանց ապաշխարութեան պէտք է քեզ որ կամ յետ դառնաս կամ յաւիտեան դժոխքի մէջ կորչիս , և էդ էլ շատ շուտով պիտի լինի ։ Կըլինին որ անհաւատներըն տեսնեն քեզ , թէ ահ չըկայ , բայց մեռնելոյ ժամանակին հէնց նորանք ահաւորակ յայտնի ցոյց են տալիս , թէ հէնց իրանք չըհաւատացին էն բաներին , որ ասացին կամ գրեցին ։ Ճշմարիտն ասումեմ քեզ՝ թէ ասած կայ՝ որ ամմէն մարդկանից դառնումէ · և քիչ ժամանակից ետև հէնց դու էլ պէտք է երևիս նորա առաջին՝ որ պատասխան տաս ։ Այսպ կամենումե՞ս հէնց դու իներ քո անձըն էն կրակի մէջ քցել · որ խէկի չի անցնել և որ նորանից ոչ ով յաւիտեան չի փրկվիլ ։ Էն ահաւոր պատիժն յաւիտեան սատանայի և նորա հրեշտակներին համար է պատրաստված · ապա եթէ դու էլ գնաս էն տեղ՝ ճշմարտութենով պիտի ասվի · թէ դու ուժով ես բռնում էն խաւարի արքայութիւնը ։

Բայց բաւական չէ որ յետ դառնաս , բայց հէնց աստուծոյ մօտ պէտք է դառնաս ։ Պատճառն որ՝ Տէրն ասումէ , թէ որ յետ դառնաք , ինձ մօտ յետ դարձէք ։ Երեմ · դ · 1 ։ Եթէ ես քո հիմիկվան ազատըն մենակ կըկամենայի հաստատել , ապա ես խորհուրդ կըտայի քեզ , որ մենակ յայտնի մեղքերըդ թողես , և աղօթում և զգոյշ կանէի քեզ որ փախչիս էն չարիքներիցն որ մեղքի ձեռամբն քեզ վերայ կըգան ։ Անասունքներըն թէև միտք չունին , բայց բնական շարժմունքով փախչումեն էն բաներիցն որ կորուստ են բերում իրանց վերայ ինչպէս որ թռչուն զուր տեղն է քցվում եթէ ծուղակն տեսնէ ։ Ձկներըն յետ են քաշվում ջրերի շատ խոր և ստորին պատուտիցն ։ Այս մարդն բանական խելքով և բոլ ուշքով կըմանե՞ էն թակարդին մէջ , որ իրան համար սարքած է · և անհոգ կըգնայ կորուստի անդունդի մէջըն ։ Բայց իմ ջանքս և կամքս մենակ էն չէ , որ մենակ էս հիմիկվան վտանգներիցն և ահիցն ազատեմ քեզ , բայց իմ կամքս և աղօթքս էլ աւելի էն է՝ որ փրկվիս մեր տէր աստուծոյ էն բարկութենիցն որ պիտի գայ ։ Դրա համար իմացէք , էն որ ասումեմ քեզ ։ Թէև և էս աշխարհքիս մեծ և յայտնի մեղքերիցն հեռանաս · բայց էնպէս էլ կարելի է՝ որ քո մեղաց մէջ մնաս և յաւիտենական կորուստի մէջ ընկնիս ։ Քո վտանգդ և ահդ մենակ յայտնի մեղքերիցդ չի գալիս ։ Կարելի է որ գրուն և յայտնի մեղքերին մօտիկ տալով՝ ստանան դառնահանիլի , բայց նա ներքուստի կըծածկվի և ամէնդարձան անձնառի-

թեան բերդի մէջն կը նստի ։ Ոչ թէ դրսի կեղտոտութիւնն է էն՝ որ տանումէ քեզ կորուստի մէջն, բայց ներսի հիւանդութիւնն, որ ամէն չարիք նորանից են դուրս գալիս ։ Ինչու որ ներսից մարդկանց սրտիցն չար խորհուրդներ են դուրս գալիս, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, պիղծ ցանկութիւններ, նախանձութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն ։ Մարկ. Է. 21. 22 ։ Ամէն յայտնի մեղք որ կեանքի մէջ գործքով կամ խօսքով տեսնըվումէ՝ քո սրտի ներսի ցանկութեան համար վկայումէ ։ Եթէ էս ապականված աղբիւրն չի սրբվի, ապա դուր տեղն ջանք կանես որ նորանից բղխած գետերն սրբես ։ Լաւ է որ մեղքը գործելուցն դադարես, միայն թէ արդարութեամբ դադարես նորանից ։ Որա համար միմիայն մին ճար կայ. էն որ մեր փրկիչն ցոյց է տալիս՝ մեզ ասելով, թէ ապաշխարեցէք և աւետարանին հաւատացէք ։ Մարկ. Ա. 15 ։ Առանց ապաշխարութեան և հաւատքի ամէնքըն որ անես օգուտ չի բերիլ, բայց եթէ դու քո անձըն մեղաւոր և ան պիտան համարելով կարենաս ամէն ուրիշ յոյսըն թողել, և միայն Քրիստոսին բոլոր սրտով հաւատալ, ապա առանց տարակուսանքի կըփրկվիս ։ Ինչու որ՝ նորա արիւնն մեղաւորներին համար թափվեցաւ. և հենց մեղաւորների գլխաւորի համար էլ թափվեցաւ ։ Նորա հնազանդութիւն մինչև 'ի մահ աստուծոյ առաջին էնքան հաճոյ և ընդունելի էլաւ, մինչև որ ամէն մեղաւոր, թէ և նորա կեանքն ամէնից մեղաւոր և անառակ էլած լինի, Յիսուսի համար ընդունելի լինի աստուծոյ առաջին, թէ որ նորա մօտ գայ Յիսուսի անունովն և նորան աղաչէ Յիսուսի արդարութեանովն և արդիւնքովն ։ Աստուծոյ յաւիտենական որդին ոչ միմիայն քեզ նման մարդկանց համար հնազանդէլաւ և մեռաւ. բայց էլ հիմիկ էլ աջ կողմն է նստում, որ նորանց համար մարդ էլաւ, երկրի վերայ մահ էկաւ և մեռաւ ։ Նորա համար էլ կարող է բոլորովին կենդանի անել էն ամէնքին, որ նորանով մօտենումեն աստուծոյ մօտ. ինչու որ՝ միշտ կենդանի է որ նորանց համար բարեխօսութիւն անէ ։ Եբր. Է. 25 ։

Ա՛վ կարդացող, եթէ դու կարողանաս էս վարդապետութիւնըս ընդունել, դու կըբժշկէ քո ցաւըդ և հիւանդութիւնըդ ։ Անտարակոյս փրկութիւն պատրաստէ քեզ համար, թէ որ դու կարողանաս պարզ մըտքով և բոլոր սրտով նորան ընդունել, իբր աստուծոյ ողորմութեան և շնորհաց պարգև, որ միմիայն Յիսուս Քրիստոսի քաւութեանովն պատրաստվեցաւ քեզ համար ։ Եթէ կարողանաս քո մեղքերըն էս մեծ պատարագի վերայ խոստովանիլ, ապա աստուած հաւատարիմ և արդար է, որ քո մեղքերըն թողէ քեզ, և քեզ ամէն անիրաւութիւններից սրբէ ։ Աստուած ոչ քո զըղջանալըն, ոչ

քո աղօթքին և ոչ քո արտասուքին չի նայիլ, որ նորանց համար քեզ թողութիւն և փրկութիւն տայ. բայց մի միայն էն է ընդունում և էն բանին է նայում. որ նորա որդին կատարեց և քեզ համար քաշեց։ Ապա եթէ քո յոյսդ ոչ քո աղօթքին և ոչ քո ողորմութեան վերայ դնես, բայց միայն Յիսուսի վերայ, որ փրկեց քեզ, և հէնց նորա անուանքին գաս. որ ողորմութիւն խնդրես, այս յաւիտենական կեանքըն պատրաստ է քեզ համար։ Էն որ ժամանակ որ էս վարդա-պետութիւնս քո խաւարված հոգուդ հանդիսա տայ՝ հէնց էն ժամանակն էլ քո սիրտդ էնպէս կըզարթէ, որ քո առաջվան ամէն ճանապարհներին ատելի և գարշելի երևին քեզ, և պարկեշտութիւնն և արդարութիւն և աստուածպաշտութիւնն քո հոգոյ ուրախութիւն լինին։ Բայց թէ որ քո սիրտդ դեռ մեղքով քարացած մնայ, թէ որ Յն Քնին և նորա էն փրկութին՝ որ իրան արդիւնքովը պատրաստված է և ողորմութեամբ տվված քեզ, խեղի քեզ համար ուրախութի և մխիթարութի չեն, բայց էլ աւելի քո մեղքից ներհակ են երևում այս իմաց, որ էլ ուրիշ անուն չըկայ երկնքի ներքևն մարդկանց տըված որ նորանով կարելի լինի քեզ ապրիլ. բայց միայն Յիսուսի Քրիստոսի անունն. և այս մեռնելոյ ահաւորութիւնն քանի տրտում կըլինի քո հոգիդ, երբ որ դու-մտքըդ կըբերես, որ քո կեանքի մէջն մին անգամ փրկութիւն տալով Ճշմարտութիւնըն լսեցիր՝ և ընդունելոյ անգամ անարգեցիր։

Երանելի են էն ամէնքն. որ Յիսուսի Քրիստոսի անուանքին յետ են դառնում նորա և իրանց հօր մօտն, նորա և իրանց աստուծոյ մօտն. և այս իրանց մեղքերիցն ազատվումն, և որդութեան պտուղ են բերում։

Նորանք էլ կառաջանան ճշմարտութեամբ, և բարեպաշտ գործ-քերով։ Արդարն պինդ կըբռնէ իրան ճանապարհըն, և նա որ սուրբ է ձեռքով, սիրտ կառնէ։ Յոբ. ԺԷ. 9։ Այդ ծառայութիւնն նորա համար օրէցօր հեշտ կըլինի. ճշմարտութիւնն էլ աւելի պարզ կերևի նորա առաջին. նորա հետ դառնալոյ հաստատութիւնն կըզօ-րանայ, նորա աստուածպաշտութիւնն և սրբութիւնն օրէցօր աւելի արմատ (քէօք) կըգցէ. իրան հաստատ լինելոյ յոյսն կըխորոգէ նորա զօրութիւնըն. և թէ նեղութիւն և թէ ուրախութիւն, թէ առ-անձին լինիլըն և թէ ընկերութեան մէջ լինիլըն, թէ աստուծոյ սաստիկ խրատն և թէ նորա շընորհաց քաղցրութիւնն, ամէնն առհասարակ օգնական կըլինի նորան՝ որ օրէցօր աւելի պատրաստ և արժանի լինի սրբոց ժառանգութեանըն լուսոյ մէջին էն նոր գալու աշխարհքումն. Ամէն։

ՎԵՐՋ

## ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

# ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

### ԳԼ. Ե.

1 Արդ՝ այսուհետեւ մեծատունք լացէք եւ ողբացէք 'ի վերայ
2 թշուառութեանցն, որ գալոց են 'ի վերայ ձեր[1]: * Զի մեծութիւնդ
3 ձեր յոշինեալ է, եւ հանդերձք ձեր կերպակուր ցեցոյ[2]: * Արծաթ
ձեր եւ ոսկի ժանգահար, եւ ժանգ նոցա լիցի ձեզ 'ի վկայութիւն,
եւ կերիցէ զմարմինս ձեր. իբրեւ զհուր գանձեցէք աւուրցն
4 յետնոց[3]: * Ահաւասիկ վարձք մշակաց՝ որ գործեն զանդս ձեր
առ ձեզ են. զրկեալն 'ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս
5 յականջս տն զօրութեանց[4]: * Փափկացայք 'ի վր երկրի՝ եւ զբօսայք.
6 սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր սպանման[5]: * Զըրկեցէք
սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ հակառակ[6]:
7 * Երկայնամիտ լերուք եղբարք իմ մինչեւ 'ի գալուստն տն. ահա
մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ
8 առցէ զկանուխ եւ զանագանն[7]: * Երկայնամտեցէք եւ դուք, եւ հաս-
9 տատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն տն մերձեալ է[8]: * Մի
տրտմեցուցանէք զմիմեանս եղբարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ
10 դատաւորն առ դուրս կայ[9]: * Օրինակ առէք եղբարք՝ չարչա-
րանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն
11 տն[10]: * Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւն յոբայ
լուարուք՝ եւ զկատարումն տն տեսէք. զի բազմագութ է տր՝ եւ
ողորմած[11]:
12 * Յառաջ քան զամ ինչ եղբարք իմ մի երդնուցուք՝ մի
յերկինս՝ մի յերկիր՝ մի յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն
այո, եւ ոչն՝ ոչ. զի մի 'ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք[12]:
13 * Վշտանայցէ ոք 'ի ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք,
14 սաղմոս ասասցէ[13]: * Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ զերէց-

---

[1] Առ. 11. 28: Ղու. 6. 24: 1. Տիմ. 6. 9: [2] Յոբ. 13. 28: Մատ. 6. 20: Յակ. 2.2: [3] Հռով. 2. 5: [4] Ղեւ. 19. 13: Յոբ. 24.10. 11: Երե. 22. 13: Մաղ. 3.5: 2. Օրէ. 24. 15: [5] Յոբ. 21. 13: Ամ. 6. 1. 4: Ղու. 16.19.25: 1. Տիմ. 5.6: [6] Յակ. 2. 6: [7] 2. Օրէ. 11. 14: Երե. 5. 24: Ովս. 6.3: Յովէլ. 2.23: Զաք. 10.1. [8] Փիլ. 4. 5: Եբր. 10. 25. 37: 1. Պետ. 4. 7: [9] Յակ. 4. 11: Մատ. 24. 33: 1. Կոր. 4.5: [10] Մատ. 5. 12: Եբր. 11. 35: [11] Սաղ. 93. 12: Մատ. 5. 10. 11: 10. 22: Յոբ. 1. 21. 22: 2. 10: 42. 10: Թւ. 14. 15: Սաղ. 102. 8: [12] Մատ. 5. 34: [13] Եփե. 5. 19: Կող. 3. 16

ռանց եկեղեցւոյն՝ և արասցեն ՚ի վերայ նր աղօթս, օծցեն իւղով
յանուն Տն [1] †. * և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, 15
և յարուսցէ զնա Տր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի
նմա [2]: * Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք 16
՚ի վը միմեանց՝ ոմ զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են
աղօթք արդարոց յօգնականութն [3]: * Եղիա մարդ էր իբրև զմեզ 17
չարչարելի. և յաղօթս եկաց՝ և ոչ անձրեւեաց յերկիր զերիս ամս
և զվեց ամիս [4]: * Եւ դարձեալ եկաց յաղօթս՝ և ետուն երկինք 18
զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր [5]:

* Եղբարք իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորիցի ՚ի ճշմարտութէ 19
ճանապարհէն՝ և դարձուսցէ ոք զնա [6]. * գիտասցէ, զի որ դար- 20
ձուսցէ զմեղաւորն ՚ի մոլորութէ ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ
զոգի իւր ՚ի մահուանէ՝ և ծածկեսցէ զբազմութի մեղաց [7]:

---

[1] Մար. 6. 13: 16. 18: [2] Եսա. 33. 24: Մատ. 9. 2: [3] Ծնն. 20. 17: Թիւ. 11. 2: 2. Օրէ. 9. 18—20: Յես. 10. 12: 1. Թա. 12. 18: 3. Թա. 13. 6: 4. Թա. 4. 33: 19. 15. 20: 20. 2. 4: Սաղ. 10. 17: 33. 16: 144. 18: Առա. 15. 29: 28. 9: Յովհ. 9. 31: 1. Յովհ. 3. 22: [4] Գործ. 14. 15: 3. Թա. 17. 1: Ղուկ. 4. 25: [5] 3. Թա. 18. 42. 45: [6] Մատ. 18. 15: [7] Հռոմ. 11. 14: 1. Կոր. 9. 22: 1. Տիմ. 4. 16: Առա. 10. 12: 1. Պետ. 4. 8:

† Օծցեն իւղով ասէ յանուն Տեառն. այսինքն ըստ օրինակի Առաքելոցն զբժշկութիւնն ըստ շնորհին անուամբ Տեառն առնէին: Յանուն Յիսուսի Քրիստոսի ասէ կաղին ՚ի ծնէ կաղին առողջեն: Գործ. 3. 6:

Եւ դարձեալ՝ Տաբիթա ասէ կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի Գործ. 9. 40: Եւ այսպէս ամենայն հրաշս գործէին անուամբ ՚ի նորա ազգաց: Նմանապէս և աստ ասէ, օծցեն իւղով յանուն Տեառն: Այն յայտ յայտնէ որպէս վարդապետին, եթէ ոչ իւղն էր այլ զօրութիւն հիւանդաց և թողութիւն մեղաց, այլ անուն Տեառն է. յորժամ աղօթիւք և ջերմեռանդութեամբ ըստ կամաց ՚ի ՍԱ զօրութիւն և թողութիւն մեղաց հեռանկի ըստ վերայ Առաքելոյն: Եւ արասցեն ՚ի վերայ նորա աղօթս. և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն. և յարուսցէ զնա Տէր: և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա:

Եւ դարձեալ ասէ, Խոստովան եղերուք միմեանց զմեղս. և աղօթս արարէք ՚ի վերայ միմեանց որպէս զի բժշկեսջիք: Քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ յօգնականութեան: Տես երես. 390: ՚Ի Պետրոս Յանձնելն:

‡ Դարձան եօթանասուն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր՝ և դևք հնազանդին մեզ յանուն քո: Ղուկ. 10. 17: Յովհ. 16. 23:

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

## ԵԶԵԿԻԵԼԻ

### ԳԼ. ԼԴ.

Առ հովիւսն Իսրայէլի

1 Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ եւ ասէ. * որդի մարդոյ՝ մարգարէ-
2 ացի՛ 'ի վերայ հովուացդ Իսրայէլի, մարգարէացի՛ եւ ասասցես ցհովիւսդ.
Այսպէս ասէ Տէր Տէր. ո՛ հովիւք Իսրայէլի. միթէ հովիւք զանձի՞նս
3 արածեն. ո՞չ հովիւք զխաշինս արածեն[1]: * Ահա՝ ասուաիկ զկաթն դու-
ուտէք, եւ զասրդ ագանիք. զպարարտն զենուք. եւ զխաշն իմ
4 ոչ արածէք[2]: * զտկարացեալն ոչ զօրացուցանէք, եւ զհիւանդաց-
եալն ոչ բժշկեցէք, զխորտակեալն ոչ յանձանձեցէք, եւ զբեկ-
եալն ոչ պատեցէք. զմոլորեալն ոչ դարձուցէք, եւ զկորուսեալն
5 ոչ խնդրեցիք. զհաստատունն աշխատ արարիք[3]: * Եւ ցրու-
եցան խաշինք իմ, քանզի ոչ գոյին նոցա հովիւք. եւ եղեն կերակուր
6 գազանաց անապատի. եւ ցրուեցան[4], * եւ մոլորեցան խաշինքն
իմ ընդ ամ լերինս, եւ ընդ ամ բլուրս բարձունս, եւ ընդ ամ
երեսս երկրի ցրուեցան խաշինքն իմ. եւ ոչ էր որ խնդրէր, եւ
ոչ այն որ դարձուցանէր:
7 * Վասն այնորիկ հովիւք լուարո՛ւք զպատգամս Տեառն: * Կեն-
8 դանի եմ ես ասէ Ադոնայի Տէր Տէր. եթէ ոչ փոխանակ զի եղեն
խաշինք իմ յաւար, եւ մատնեցան խաշինք իմ 'ի կերակուր գազա-
նաց անապատի. վա՛յ զի ոչ գոյին հովիւք, եւ ոչ խնդրեցին հովիւք
զխաշինս իմ. եւ բուծին հովիւքն զանձինս իւրեանց, եւ զխաշինս
9 իմ ոչ արածէին[5]: * փոխանակ այնորիկ լուարո՛ւք հովիւք
10 զպատգամս Տեառն: * Այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես
'ի վերայ հովուացդ. եւ պահանջեցի՛ց զխաշինս իմ 'ի ձեռաց դոցա,
եւ դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաշինս իմ. եւ ոչ եւս
արածեսցեն զնոսա. եւ փրկեցից զխաշինս իմ 'ի ձեռաց դոցա,
եւ ոչ եւս եղիցին դոցա 'ի կերակուր[6]:
11 * Զի այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես ինքնին խնդրեցից
12 զխաշինս իմ, եւ այց արարից դոցա: * Զոր օրինակ խնդրէ հովիւ

---

[1] Եզկ. 33. 24: Երմ. 23. 1: Զաք. 11. 17: [2] Եսա. 56. 11: Զաք. 11. 16: Եզկ. 33. 25. 26: Միք. 3. 1. 2. 3: Զաք. 11. 5: [3] Հռովմ. 16: Զաք. 11. 16: Ղուկ. 15. 4: 1. Պետ. 5. 3. [4] Եզկ. 33. 21. 28: 3. Թագ. 22. 17: Մատ. 9. 36: Եսա. 56. 9: Երմ. 12. 9: Հռովմ. 8: [5] Հռովմ. 5: 6: 2: 10: [6] Եզկ. 3. 18: Եբր. 13. 17: Հռովմ. 2: 8:

զնօտ իւր, յաւուր յորում իցէ մէգ և մառախուղ 'ի մէջ խաշանց
իւրոց վատնելոց. նոյնպէս խնդրեցից զխաշինս իմ, և ժողովեցից
զնս յամ տեղեաց ուր ցրուեցան 'ի նս յաւուր միգի և մառախղի[1]:
13 * Եւ հանից զնս յազգաց, և ժողովեցից զնս 'ի գաւառաց, և
տարայց զնս յերկիրն իւրեանց, և արածեցից զնոսա 'ի վր լե-
14 րանց Իլի[2], * և 'ի ձորս և յամ բնակութե երկրին: յարօտ
փափկութե արածեցից զնս 'ի լերինն բարձու Իլի. և անդ եղիցին
մակաղատեղք նց, անդ դադարեսցեն՝ և անդ հանգիցեն 'ի փափկու-
թեան բարութեց. և յարօտ պարարտութե արածեսցին 'ի վր լերան-
15 ցն Իլի[3]: * Ես արածեցից զխաշինս իմ, և ես հանգուցից զնս.
16 և ծանիցեն թէ ես եմ Տր: Այսպէս ասէ Տր Տր. * զկորուս-
եալն խնդրեցից, և զմոլորեալն դարձուցից, զբեկեալն պատեցից,
և զվատեալն զօրացուցից, զգէրն և զհզօրն պահեցից. և արածեցից
17 զնս իրաւամբք[4]: * Եւ դուք խաշինք իմ, այսպէս ասէ Տր Տր.
ահաւասիկ ես՝ ոչխար առ ոչխար դատեցայց, և խոյ՝ առ խոյ[5]:
18 * չիցէ՞ ձեզ բաւական զգեղեցիկ արօտն յառաջագոյն արածել.
այլև զմնացեալ ճարակն 'ի ձէնջ առ ոտն կոտորէիք, և զ ջուր-
19 ոյն յստակ ըմպէիք, և զմնացեալն առ ոտն պղտորէիք: * և
խաշինք իմ զկոխան ոտից ձերոց ճարակէին. և զ ջուրն պղտորեալ
'ի կճղակաց ձերոց ըմպէին:
20 * Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ
21 ես դատեցայց 'ի մէջ հարուստ և անաւագ ոչխարաց[6]: * փոխա-
նակ զի կողմամբք և ուսովք ձերովք գրթեցէիք և ոգորէիք,
և եղջերովք ձերովք խեթկէիք զամ անաւագն. և 'ի բաց
22 մերժէիք զնս, մինչև ցրուեցան խաշինք իմ: * Եւ փրկեցից
զխաշինս իմ, և ոչ ևս լինիցին 'ի յափշտակութի. դատեցայց խոյ՝
23 առ խոյ[7]: * և կացուցից 'ի վր նց հովիւ մի զծառայ իմ զԴաւիթ,
24 և նա հովուեսցէ զնս: նա եղիցի նց հովիւ[8]. * և ես Տր եղէց նոցա
յԱծ. և Դաւիթ ծառայ իմ իշխան 'ի մէջ նց: Ես Տր խօսե-
25 ցայ: [9]* և եդից ընդ Դաւթի ուխտ խաղաղութե, և ապականեցից
զգազանս չար յերկրէ, և բնակեսցեն յանապատին յուսով, և
26 ննջեսցեն յանտառս[10]: * Եւ տաց նց շուրջ զլերամբ իմով օրհնութի.

[1] Եզկ. 30. 3: Յովէլ 2.2: [2] Ես. 65. 9. 10: Երմ. 23. 3: Եզկ. 28. 25: 36.24: 37. 21. 22: [3] Սղ. 22. 2: Երմ. 33. 12: [4] Համր. 4: Ես. 40. 11: Միք. 4. 6: Մտթ. 18. 11: Մրկ. 2. 17: Ղուկ. 5. 32: Ես. 10. 16: Ամ. 4. 1: Երմ. 10. 24: [5] Եզկ. 20. 37. 38: Համր. 20: 22: Զաք. 10. 3: Մտթ. 25. 32. 33: [6] Համր. 17: [7] Համր. 17: [8] Ես. 40. 11: Երմ. 23. 4. 5: Յովհ. 10. 11. Եբր. 13. 20: 1. Պետ. 2. 25: 5. 4: Երմ. 30. 9: Եզկ. 37. 24. 25: Ով. 3. 5: [9] Համր. 30: Ելք. 29.45: Եզկ. 37. 27: 37. 22: Ղուկ. 1. 32. 33: [10] Եզկ. 37. 26: Ղևտ. 26. 6: Ես. 11. 6—9: 35. 9: Ով. 2. 18: Համր. 28: Երմ. 23. 6:

և տաց ձեզ անձրև, և եղիցին անձրևք օրհնութե[1]: * Ծառք 27
ագարակի տացեն զպտուղս իւրեանց, և երկիր տացէ զզօրութի իւր.
և բնակեսցեն յերկրի իւրեանց յուսով խաղաղութեց: և ծանիցեն
թէ ես եմ Տր. 'ի խորտակել իմն զլուծ պարանոցի նց: Եւ
փրկեցից զնս 'ի ձեռաց ծառայեցուցչաց իւրեանց[2]: * և ոչ ևս եղիցին 28
յաւար 'ի մէջ ազգաց. և գազանք երկրի մի ևս կերիցեն զնս: և
բնակեսցեն յուսով, և ոչոք էցէ որ զարհուրեցուսցանիցէ զնոսա[3]:
* և կանգնեցից նց տունկ խաղաղութե. և ոչ ևս վատեսցին 'ի սովոյ 29
'իվր երկրի, և նախատինս յազգաց ոչ ևս կրեսցեն[4]: * Եւ ծանիցեն 30
թէ ես Տր Ած նց՝ ընդ նոսա եմ. և նոքա ժողովուրդ իմ՝ տունն
Իղի, ասէ Տր Տր[5]: * Եւ դուք խաշինք իմ ոչխարք արօտի իմոյ՝ 31
մարդիկ էք, և ես Տր Ած ձեր, ասէ Տր Տր[6]:

---

[1] Ես. 56. 7: Եզկ. 20. 40: Յոէ. 12. 2: Ես. 19. 24: Զաք. 8. 13: Ղևտ. 26. 4: Սաղ. 67. 10: Մաղ. 3. 10: [2] Ղևտ. 26. 4: Սաղ. 84. 12: Ես. 4. 2: Ղևտ. 26. 13: Երմ. 2. 20: 25. 14: [3] Ովս. 8: Եզկ. 36. 4: Ովս. 25: Երմ. 30. 10: 46. 27: [4] Ես. 11. 1: Երմ. 23. 5: Եզկ. 36. 3. 6. 15: [5] Ովս. 24: Եզկ. 37. 27: [6] Սաղ. 99. 3: Յովհ. 10. 11:

---

Վերևի տպեալ Եզեկիէլ Մարգարէի անցեալ մարգարէութիւնն պարզ ցոյց տալիս որ՝ ներկայիս եթէոր ժողովրդի հովիւներն հաւատարիմ հովիւութիւն չեն անում իւրեանց ժողովըրդին. ժողովուրդնէլ առանց չոպան ոչխարներիպէս ցաք ու ցրիւեն գալիս ամեն տեղ։ և անտէր մնալով ինչ տեղ որ թշնամուն յանդիպումէն յաղթմանեն։ վասն զի տէր. օգնական և փրկող չունեն, այժմ այպէսէ եղեր Պատուելի Հայոց Ազգի կեցութիւնն։ Արքակրոն Կաթողիկոս։ Արքակրոն Պատրիարգներ։ Արքակրոն Արք Եպիսկոպոսներ։ Արքակրոն Եպիսկոպոսներ։ և այլ Արքակրոն քահանայքներ լու բավականին ունեն. այս ոչ ոքայ ջերմեռանդութեան. և ամեն բարի բաների համար սէր. նախանձ. և թուացողութիւն չունեն։ ազգաշինութեան. ազգն ինչպէս պէտքէ աճի զօրանայ. և լուսաորվի էս կողմանէ տուելէն թըմբելէն. էլ ոչինչ փոյթ չունեն. բայցի վասն իւրեանց ապրուստին ըզգաստ են որ նուիրակներ պատրաստեն յուղարկեն. և ինչպէս որ կարողեն իւրեանց եկամուտ և նուիրակութիւնն ժողովեն։ և երբոր նուիրակութիւնն հաւաքեցին պուծան. յանժամ երբեմնել իմաստ. և յիշատակներ կժողովեն։ էսայ էտանց այժմէս կեցութիւնն։ սորանց ներհակն։

Պապադաւան Հայ քահանայքն օրաւուր գիտութեամբ. իմաստութեամբ և իւրեանց ժողովուրդն յաւելցանելէ համար զգաստանումեն. զօրանումեն. և իւրեանք քանց իւրեանց ժողովուրդն իմաստուն և

գիտունենն լինում։ տորանց ներհական կաթողիկոսացան † Հայ քահանայքն։ շատ և շատ ախորժելի բանն այս։ Տէր Յն օրհնի Պատուելի Հայոց Ազգին։ † Գէորգ Լուսաւորչեան։

---

### Կարճառօտ
### Պատմութիւն Տէր Փիլիպպոս Կաթողիկոսի

Եւ յօրէ յորմէհետէ էառ զիշխանութիւն վարդապետական, անխոնջ 'ի քարոզութիւն և 'ի խրատել եկաց, 'ի գիւղս և 'ի քաղաքս, 'ի վանս և յանապատս, և յամենայն տեղիս, և զորինչ քարոզեալ խրատէր ոչ ողալէր, այլ նախ արդիւնացեալ պտղաբերէր։

Եւ 'ի մերձակայ աւուրս վախճանի իւրոյ տէր փիլիպպոս կաթողիկոս էր 'ի սբ Էջմիածինն. յաւուրս աղուհացից 'ի չորրորդում կիրակէին, և ըստ հանապազորդեան սովորութե իւրում նստաւ յաթոռ և սկսաւ տալ զքարոզ այնր կիրակէին, որոյ բնաբանն է, Այր մի էր մեծատուն՝ որոյ էր անտես և եղև զնմանէ ամբաստանութիւն։ Ղուկ ·16·1—8։ Եւ մեկնելով էհաս 'ի բանն յայն, որ ասէ, ոչ ևս կարես լինել անտես, և ասաց վերջարար բանին։ և յաւուրն երկրորդի, որ էր երկուշաբթ օր տկարացաւ և անկաւ 'ի մահիճս։ Ժողովեցան առ նա ամենայն միաբանքն և աշակերտքն իւր հարցանէին վասն կաբութեն, որոց պատասխանեալ ասաց՝ այս է վերջին տկարութիւն իմ, որ ոչ ևս յառնեմ յառողջութիւն, քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի 'ի բանն որ ասաց։ Ոչ ևս կարես լինել անտես, թուեցաւ ինձ իբր թէ յայլմէ յումեմնէ ազդեցաւ 'ի սիրտս իմ, թէ ոչ ևս այդպիսի մարմնաւորքդ կեանք՝ և այլ ևս ոչ անտեսես 'ի տան Այ, այլ վճարին ժամանակք։ Եւ մնաց տկար մինչ էհաս 'ի հինգերորդ կիրակէն՝ և յայնմ գիշերի դէպ 'ի լոյս առաւօտուն սկսաւ հոգեվարիլ, ինքն ևս գիտաց որ հոգեվարի է, վասն որոյ հանապազ զաղօթս և զգոհաբանութիւն Այ ունէր 'ի բերանն իւր ասելով. արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. աւանդեաց զօրհնեալ հոգին իւր 'ի ձեռս Այ սբ հայրապետն փիլիպպոս։ ամս երես ·337· 'ի Առաքել Պատմագիր ասել 'ի Ժամանակագրութեան ·1669։

---

### Կարճառօտ Պատմութիւն Վարդապետութեան և Վարուց սրբոյ Վարդապետին Պօղոսի

Սուրբ վարդապետն պօղոս էր յերկրէն մոկաց 'ի գեղջէն, զոր անուանեն բար։ եկեալ 'ի սուրբ և 'ի մեծահռչակ ուխտն վարագայ յարեցաւ առ կարապետ վարդապետն, զորոյ զմակ անուանն ծաղ. վարժապետ ասէին, որում աշակերտեալ ուսաւ զամենայն գիրս հնոց և նորոց կտակարանաց, և իբրև կատարեալ եղև գիտութբ և հասակաւ՝ ետ նմա ծաղ. վարժապետն զիշխանութիւն վարժապետութե. և նա գնացեալ իմէջ քրիստոնէից քարոզէր զպատուիրանս Այ։ Եւ քարոզելով

եկն 'ի Թուրքեզ քաղաք, և անդ 'ի կիրարկեալ զգործ վարժապետութե իւրոյ, և յետ ամս քարոզիւ և դասիւ և յորդ առատիւ վարժապետութե լուսաւորէր զժողովուրդս քրիստոնէից՝ որք և պատահէին անդ։ Քանզի յամենից կողմանց եկեալ վաճառականքն՝ որք գային 'ի Թուրքեզ. իբրև պատահէին լոյս քարոզութե սրբոյ վարդպտին մխիթարեալք զուարճանային հոգւով. և զօրհնութիւն մատուցանէին ԱՅ տուողին այնպիսեաց շնորհաց։

Եւ ինքն պօղոս վարդպտն. էր վարուքն սբ և առաքինի. հանապազօր սաղմոսերգ. և արտասուօք և մտաւոր աղօթարար. որ զգիշեր շաբաթ աւուրն յորում լուսանայր միաշաբաթ օրն. յերեկոյէ սկսեալ յառին կանգնէր. և մինչ 'ի լուսանալն հսկումն առնէր. և զամ շաբաթու գիշեր այսպէս առնէր. զյիշեցուցքն, զկանոն գլուխն, զալէլուն խաղով սաէր հանդերձ ութ կանոնաւ սաղմոսիւն. . . այլև հրաժարեալ էր 'ի գինւոյ և 'ի մսոյ ամենևին. 'ի շաբաթօր և կիրակի միայն ճաշակէր 'ի նաւակատեաց կերակրոց. և զայլ ամենեսեան աւուրս տարւոյն պահօք կայր։ այլև ոչինչ ստանայր զինչս և զստացուածս յումեքէ՝ զի անարծաթ քարոզէր։ և թէ տային նմա ժողովուրդքն ինչս. զայն նա 'ի պէտս գերեաց և կարօտելոց և 'ի շինութիւն եկեղեցեաց ծախէր։ այլև ուրև գնայր 'ի ճանապարհ թէ հեռաւոր և թէ մօտաւոր՝ հետի ոտս գնայր. քանզի զգիրս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշակերտքն իւր բառնային շալակով և գնային։ . .

Եւ ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն ճշմարտից վարուց նր. և վաճառականքն, որք էին յերկրէն գողթանց աղաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց 'ի քարոզութի. յորոց մի էր ցղնեցի խօջայ հայրապետն և այլք ևս ընդ նմա. և զայս բան 'ի բազում աւուրս թախանձէին։ Իսկ վրդպտն հաճեալ 'ի բանս նց գնաց 'ի գաւառն գողթանց և եկեալ 'ի գիւղն ագուլիս։ . . . և ոպ Տէրն Քս արեգակն արդարութե ծագեցաւ յաշխարհս. և լուսաւորեաց զամենեսեան հաւատով ԱՅ գիտութե. այսպէս և սբ վրդպտն պօղոս զկողմնս արևելեան. վասնզի էբարձ 'ի միջոյ զամ աւելորդ անկարգութիւն յեկեղեցականաց և յաշխարհականաց. և կարգադրեալ շքեղացոյց զամենն ուղղիւ քարոզութբ։ . . . զի առաքելաբար շրջէր յամն տեղիս. քարոզէր զբանն կենաց. կարգէր զքահանայս, շինէր զեկեղեցիս, և հաստատէր զբարի կարգս յեկեղեցիս և 'ի գիւղս. ժողովէր զմանկունս յուսումն սրբոց գրոց. և 'ի տեղիս տեղիս հաստատէր զդպրատունս՝ և յիւրոց աշակերտաց կացուցանէր զդպրապետս. և զոմանս 'ի մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր. որև ամքն հասին աստիճանի՝ աբեղայ և երէց՝ բաւական ինքեանց և ժողովրդեան։ . . . և այնուհետև պօղոս վարդպտն գնաց 'ի մեծ անապատն՝ կայր միակեցութբ լռեալ 'ի խցի. մշտամատուցիւք աղօթիւք խնամկցելով ընդ ԱՅ։ է կաց անդէն և ոչ ել արտաքս

յանապատէն մինչև ցվախճան կենաց իւրոց՝ որ հանգեաւ 'ի Քս . և անդէն թաղեցաւ ։ և եղև վախճան սորա . հազար և վաթսուն և ինն ամի թուականի մերում ։ տես երես . 263. Աղաքել Պատմագիր . 'ի Յամսթէրդամ .1669։ և Հայոց .1118։ և ևս տես երես . 566։ 'ի Պատմութիւն Հայոց Հատոր . գ . տպեալ 'ի Վէնէտիկ .1786։

---

Կարճառօտ

Պատմութիւն Աբբահօրն Մխիթարայ Վարդապետի

Մխիթար Վարդապետ . . ծնաւ 'ի Սեբաստիա՝ յամի տեառն . 1676. և 'ի թուականութեան Հայոց . ՌՃԻԵ . . Եւ 'ի տղայական տիոց անտի մտաւ 'ի բարի վարս և յերկիւղի տեառն, խրատեալ 'ի մէրկուց սրբակրօն կուսանաց, որոց միոյն անուն էր Մանաւէ, և միւսոյն Մարիամ. 'Իսկ այս հոգեշունչ բանից վառեալ սիրտ Մխիթարայ՝ ջանայր զարգանալ յառաքինութիւնս, և յուսումն իմաստից ։ Եւ հասեալ 'ի չորեքտասանամեայ կարգ. ամի՝ ձեռնադրեցաւ սարկաւագ ։ . . և գնացեալ յէջմիածին՝ եկաց անդ զժամանակ ինչ . եկաց ապա և յայլ վանս ։ . . Եւ լեալ քսան ամաց՝ ձեռնադրեցաւ քահանայ . և եառ յետոյ զաւազան վարդապետութեան 'ի Մարգար վարդապետէ կարնեցւոյ. և սկսաւ քարոզել այնչափ առատ բանիւք 'ի բազում տեղիս, մինչև զարմացուցանել զամենեսին՝ որք միանգամ լսէին զքարոզս նորա ։ Եւ էր նա ինքն խոնարհամիտ և քաղցրաբարոյ, բազմահանճար և վսեմախոհ, փութայի և անձնեայ, լայնախորհուրդ և զգուշաւոր . ձայն նորա ախորժ, և տեսիլ դիմացն վեհ . քարոզութիւն նորա ազդու, և բանքն յորդոյ . կրթութիւն նորա 'ի հոգևորական կեանս անկշռելի, և փոյթ ջանիցն իմաստութեան անբաւ ։

Ըստ այսպիսի իւրոց անձին հանգամանաց ցանկայր և փափագէր յամ սրտէ սա ինքն Մխիթար վարդապետ մուծանել և արմատացուցանել յամենայն զուգութիւն բարի վարուց, և զուսումն ճշմարիտ իմաստութեան և ողջամիտ վարդապետութեան . և վասն այսր իսկ խորհէր հաստատել զմիաբանութիւն ինչ, և կրթել 'ի նմա զանձինս առ 'ի հանապազորդել 'ի նոյն, և նոքին լցուցանել զխորհուրդ իւր ։ Եւ քանզի յայնմ ժամանակի խաչատուր վարդապետ կարնեցի աշակերտ դպրատան փիլիփականսայ երևելի էր, և նստէր 'ի կոստանդնուպօլիս, գնաց առ նա, և յայտնեաց նմա զխորհուրդ իւր՝ կամելով օգնական ունել զնա ինքեան . և խոստանայր նմա՝ զի նա լիցի գլուխ, և ինքն հոգատար և ծառայող . իսկ նա առաջի եդեալ զբազում դժուարութիւնս, և զպիտոյութիւն յոլով դրամոց, հրաժարեցաւ անտի ։ Զայն տեսեալ Մխիթարայ վարդապետի՝ դարձաւ յարևելս . և եկեալ առ Մարգար վարդապետ՝ նմա ևս եցոյց զբանն՝ զոր ունէր 'ի մտի . և խնդրէր 'ի նմանէ, զի ձեռնատու լիցի ինքեան ։ Բայց նա ևս եդ առաջի զբազում դժուարութիւնս . որով հասեալ Մխիթարայ գոյս իւր

ССР

'ի մարդկային հնարից՝ ապաւինեցաւ յԱծ. և 'ի Նա յանձն արար զելս իրացն ։

Ելեալ ապա յարեւելից՝ եկն միւսանգամ 'ի Կոստանդնուպօլիս յամի. 1700. և հայոց. ռ՟ճխթ. և Նստաւ 'ի ժամանակս եկեղեցւոյ սբ լուսաւորչին. որպէս ասացաք 'ի Գլուխ. Ի. և հրամանաւ պատրիարգին սկսաւ քարոզել անդ ձրի ։ Եւ գային առ Նա 'ի լսել զքարոզութիւն նորա ժողովուրդ բազում յոյժ. և շահէին ամենեքին, և սքանչանային ընդ Նա. և բազում մեծարանօք պատուէին զՆա ։ Բայց նորա զԱծ պատուի և զյարգութիւն մարդկան ոչինչ համարեալ՝ ջանայր միշտ զամենեսին յուղղութիւն և յԱծպաշտութիւն վերածել. և յԱմ ժամ հառաչէր 'ի սրտէ՝ գտանել զելս կատարման խորհրդոց իւրոց ։ Զայս գիտելով Նորա՝ սկսաւ ժողովել զաշակերտս, և մարզել զնոսա 'ի զգաստութիւն անարատ վարուց, և յիմաստս Ածային գիտութեան ։

Եր յայնմ ժամանակի 'ի Կոստանդնուպօլիս վէպ ոմն եղիա անուն, որ եկեալ էր 'ի քարոզութիւն հրամանաւ մինաս վէպի պատրիարգին Եջմի ։ Սա յարեալ 'ի սէր մխիթարայ վէպի՝ աշակերտեցաւ Նմա ։ Եւ եղև թիւ աշակերտաց Նորա ԺՆ. որոց և յայտնեաց զխորհուրդ իւր, թէ կամի զհաստատութիւն ինչ հաստատել, զի Նովաւ մնասցէ յազգ մեր հաստատուն կարգ գիտութեան, և ուսումն ողջամիտ վարդապետութեան ։ Եւ 'ի յօժարիլ Նոցա յայս խորհուրդ՝ առաւել ևս փութայր մխիթար վարդապետ կրթել զնոսա ։ Ուսոյց և վասն հոգևորական կրթութեան Նոցին, և վասն շահելոյ Նաև զհոգիս այլոց, ետ տպագրել զգիրսն կոչեցեալ Թովմա գեմպացի ԼԱ ։ Եւ 'ի պատճառս կազմութեան այսպիսի գրոց առ իւր պահէր զաշակերտսն. և ուսուցանէր զնոսա 'ի տան միում, զոր կալեալ էր 'ի վարձու 'ի պէրա, ՃՊ 'ի պէյօղլու. և ինքն յառաւօտս կէսօրակէից իջեալ յեկեղեցին սբ լուսաւորչին՝ քարոզէր անդ ։ Նա ապա ձեռնադրել զոմանս յաշակերտաց իւրոց քահանայ, և առաքեաց զնոսա 'ի քարոզութիւն. որոց բանիւք բազումք դարձան 'ի չար ճանապարհէ, և զօրացան պատերազմել սիրովք մեղաւորաց. և բազումք՝ որք յառաջն յամին միանգամ հաղորդէին խոստովանէին, այնուհետև յԱմ ամիս, և ոմանք յԱմ շաբաթս 'ի խոստովանութիւն փութային ։ . . . .

Եւ կարգեալ զԱմ ինչ լաւ օրինի, յանձնարկել հրամանի վերնոյն փոխեցաւ յաստեացս՝ յամի ՏՌն. 1749։ և հայոց. ռ՟ճղը ։ ամս երես. 762—768։ Դի Պատմութիւն Հայոց. հատոր. գ. տպեալ 1786։

Այս Մխիթար Վարդապետն է Վենետիկոյ ուրբ Ղազար անուամբ Վանք շինել տուողն ։ այս բազմաջան սքանչելի Մխիթար Վարդապետն է որոյ այս Վանքի Գրքատուն. Դպրատուն. Տպարան. և միաբանութիւն հաստատողն։ ապա շատ ափսոս. որ վերջն տա Պապադուանն մեռնում ։

Հնդստանայ Մադրաս քաղաքումն Ազա Սամուէլ Մուրատն իւր կտակումն եօթն լաք Մադրասի ռուփիէր գրել. որ իւր ժառանգներն պարգևին վերայ յիշեալ Վենետիկայ Վանքին։ Ազա Սամուէլն վախճանելէն. քանի տարէն յետ. Ազայ Սամուէլի դօլվաթիցն. Ազայ Սամուէլի ժառանգներն. ինն Լաք (թ ինն հարիւր հազար) Մադրասայ ռուփի հասուցրին վերայ յիշեալ Վենետիկայ Վանքին։ ահա այսէ Մուրատեան Ազգադաւս պարգև։ եթէ որ այն այս ինն Լաք ռուփին վասն դպրատան. գրքատան. տպարան և աղքատաց մանկանց ծրի կերակուր. ըզգեստ. բնակութիւն. գիրք. քաղաթ. և ուսումի համարէ տվվել։

Գերմէի երեք Վարդապետաց պատմութիւնն (կարճառօտ) տպվելոյ պատճառն է որ մեք ամենեքեանս տեսնեմք. որ ամմէն ճշմարիտ քրիստոնեայ միշտ Սուրբ Աւետարանն կքարոզէ. վասն երկու պատճառի. թ Նախ. անհաւատներն քնյ հաւատան. և քնի աշակերտ լինեն։ և Երկրորդ. քնյ հաւատացող և քնյ աշակերտ լինողներն ճշմարիտ քրիստոնէութեան թ Աւետարանի քրիստոնէութեան վարդապետութիւններն ուսանեն։ Ինչպէս որ մեր Տէր և փրկիչ Յս քսն հրամայելայ իւր Առաքելոցն ասելով 'Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի։' Մտթ. 28.19. 20։ վասն որոյ ես ասէ Առաքեալն Պետրոս 'Այլ զՏէր զնոյն զքն՝ սուրբ առնիջիք 'ի սիրտս ձեր։ Պատրաստեցէք տալ պատասխանի ամի որ խնդրիցէ զբանն. որէ վասն յուսոյն ձերոյ։ Այլ հեզութեամբ և երկիւղիւ ունիցիք բարւ քաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ յամօթ լիցին՝ որք բամբասեն զձեր բարւոք գնացս 'ի քն'։1. Պետ. 3.15.16։ ապա վայն դայ Նորայ գլուխին. որ քահանայութեան կարգն կըսանէ. քահանայութեան ըզգեստնել կըհագնէ վն 'ի ցոյց մարդկան. և իրանել քահանայ կոչել կըտայ. ապա իւր Տէր և փրկչի հրամաններն. և իւր ձեռնադրութեան սրվան խոստմունքներն ամմէնն իւր մտքիցն դուրս կըձգէ. միմիայն երծաթասիրութեամբ և աշխարհասիրութեամբ իւր կեանքն կըանցուցանէ։ * Յովհ .1.14։ փիլ. 2. 7։ 2. կոր. 8. 9։

---

Ա. Կրօնաւորս, և առ. ծառայս Աստուծոյ

Մտածութիւնք Սուրբաթու

**Յաղագս օրինացն քրիստոսի առ ընկերս**

ա. Զմտաւ ած. ով որդին իմ, երկրպագեալն 'ի հրեշտակաց յերկինս. որ ոչինչ իմիք կարօտի՝ վասն լինելոյն յիւրմէ երանեալ, տակայն և անպէս յանձն էառ լինել մարդ * պիտառոր, վշտակիր և կարեկիր. 'ի լինել մեր ուսուցիչ և առաջնորդ յայամ վտանկաւոր

աքսորանացս վայրի, յոր ոչ առնուլեալ զնա անձին ինչ չարչարութիւն կամ օգուտ, այլ՝ մաքրիմ և եռանդագին սէր Նորա առ մեզ ։

ԺԴ. Զմտաւ ած. որպէս փրկիչ մեր ոչ շատացաւ մարդանալ վասն սիրոյ. այլ առեալ Թէ չէաք ձեռնհաս վճարել ամենայն արդարութեան զպարտիս յանցուածոց մերոց, եբարձ զամ 'ի վերայ ուսոց[1] իւրոց. և լիով վճարեաց վասն ամ ազգի մարդկան. նա Թաւթաղուն վճարեաց. զի որ կարողն էր վճարել կոյլակաւ, վճարեաց կոհակաւ ։

ԺԵ. Զմտաւ ած. որպէս բարերարն Յս Թէպէտ և յառաջասաց էր, Թէ բազումք լինելոց էին ապերախտ առ այսչափ երախտիս, և անարժան առ այսչափ սէր, բայց և այնպէս ոչ նահանջեաց զսէրն, և ոչ հովացաւ 'ի նմանէ. և ոչ 'ի դերև արար զապերախտսն յիւրոց սիրոյ պարգևաց. այլ՝ որպէս գերագոյն բարի առ ամենեսին առատաձեռնեաց ։ [1]Եսա. 9. 6։ 53. 5։ [2]Մատ. 9. 35։ [3]Ղուկ. 4. 16—22։

ԺԶ. Զմտաւ ած զմիշտ և զաշխատութիւնս, զորս յանձին կալաւ Քս առ օգնել ընկերաց. և ծանիցես զառաւելութիւն սիրոյ Նորա։ Երթայր հետի գեղջէ 'ի գեղ[2], և ընդ ժողովրդեանցս[3], ուսուցեալ ամենեցուն զճանապարհ փրկութեան. և չէր նմա փոյթ զվշտակրութեանց՝ 'ի քարոզել ամենայն զարքայութիւն երկնից. որ և երբեմն Թէպէտ և վաստակեալ 'ի ճանապարհէ՝ ոչ յիշեաց հաց ուտել [4], որ պիտոյն էր նմա. իբր զի որն էր առաքմանն, և ինքն անօթեաց, որպէս զի զսամարացին յապաշխարութի կոչեսցէ ։ [4]Յոհ. 4. 6—34։

ԺԷ. Զմտաւ ած զմեծ սէրն, զոր բարերարն Յս եցոյց առ մեզ, 'խնդրել Նորա զմեզ իսպառ, առանձնեալ զինքն մեզ 'ի մէջ խորհրդեան։ 'Ի մէջ չարչարանս իւր ևս եցոյց մեզ ոչ սակաւ սէր, զի 'ի փրկել զմեզ 'ի գերութենէ սատանայի, և 'ի Թշուառութենէ մեղաց, համբերեր անողորմ տանջանաց, որպիսիք չեղեն երբեք յաշխարհի ։ Եւ մինչդեռ 'ի խաչին՝ յաղօթս եկաց վասն իւրոց խաչահանուաց, և անբաւիր արար զնոսա առաջի հօր իւրոյ երկնաւորի, ասելով. Հայր Թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն ։ Ղուկ. 23. 34։

Դատիր յանձն քոյ, և հայեցեալ յօրինակ մեծ 'ի վերոգրեալ
ախորժելեաց օգնել ընկերի քում. և այսէ պատուէր Տեառն Յիսուսի

Ա. Կամիցի՞ս խմանալ զմեծութիւն սիրոյ քո առ ընկերս. գիր 'ի կշիռ ընդ ամի՝ զոր առնես վասն Նոցա. և գտցես զնա համեմատ կշիռ աշխատութեանց և տարաժամութեանց՝ զորս յանձն առնուս առ օգնել Նոցա ։

Բ. Թէ ոչ օգնես ոչ հոգւոյ և ոչ մարմնոյ ընկերի քոյ. և չառնուս յանձն նեղել փոքր մի վասն օգտի Նորա. և Թէ օգնես ևս ինչ, շրջես 'ի քո օգուտ. զի՞նչ սէր իցէ այդ ։

Գ. Որ ունի զճշմարիտ սէր, անձկայ հոգևոր օգտի ընկերի իւրոյ, որպէս անձին. յաղօթս կայ վասն Նորա. 'ի Թիկունս հասանի նմա 'ի կարիս. և յօժարամիտ ներէ ամ յանցուածոց Նորա ։

## Մտածութիւն Շաբաթու

### Յաղագս ջանոյն Քրիստոսի 'ի հոգեւորս

ա. Զմտաւ ած․ որպէս Տէր մեր եղև փութաջան 'ի պահել զօրէնս, որպէս թէ պարտաւոր էր այնմ․ վն՜յ ութօրեայ թլփատեցաւ․ և քառասնօրեայ 'ի տաճարն ընծայեցաւ․ և ամի ամի յիւրում ժամանակի երթայր յԵ՜մ, երկիր պագանել ըստ սովորութեանն։ Պատուեաց միշտ զյովսէփ և զկոյս մայր իւր ըստ հրամանի օրինացն։

բ. Զմտաւ ած․ որպէս փութաջանն Յս յորժամ հանդերձեալ էր այլոց առաջնորդութիւն քարոզել, նախ անձամբ զփորձ էառ, վն՜յ յետ մկրտութեանն՝ չոգաւ յանապատ, և անդ ա̄մ ջանիւ միշտ եղ ծնչման մարմնոյ իւրոյ պահօք, խոկման աղօթից, և այլ հոգևորական գործոց։ Ղուկ․ 4․1—2։

գ. Զմտաւ ած․ որպէս փրկիչ մեր իբրև դարձաւ յանապատէ, սկիզբն արար քարոզութեան, և գործական փութով աշխատ լինէր առ ուղղելոյ զամենեսին 'ի ճանապարհ փրկութեան։ Բժշկէր զհիւանդս ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ․ կշտամբէր զմոլութիւնս․ քաջալերէր յառաքինութիւնս․ շրջէր ընդ տեղիս տեղիս՝ առ օգնելոյ բազմաց․ և 'ի գործել զբարիս ոչ խնայէր յաշխատութիւն իւր։ Ղուկ․ 4․15։

դ. Զմտաւ ած․ որպէս կամք էին Քսի, զի և իւր աշակերտք իցեն ժրաջան 'ի գործել զբարիս վասն այսորիկ ստէպ առաքէր զնոսա 'ի պատգամաբերել 'ի մօտակայ գեօղս, այլ 'ի քարոզել, 'ի հալածել զդևս, 'ի բժշկել զհիւանդս։ Եւ յայս սակս յորդորէր ստէպ զիւր աշակերտս՝ մեծ սէր ունել․ վասն զի քաջ գիտէր, թէ սէրն է մայր փութոյ, և սկիզբն ամ հոգևորական գործոց։

ե. Զմտաւ ած․ որպէս բարերարն Յս եղև փութաջան 'ի յաճախել յաղօթս․ և յորժամ 'ի տուէ ոչ կարէր աղօթել, վասն պարապելոյ իւրոյ 'ի քարոզել և 'ի խրատել զընկերս, 'ի գիշերի կայր յաղօթս։ Նա՝ որպէս սրբն ղուկաս ասէ *. հանէր զգիշերն 'ի գլուխ՝ յաղօթս այ։ Որ և յայս անտի է․ զի յառաջ քան զսկիզբն չարչարանաց իւրոց, բազում փութով և խոնարհութեամբ երիցս եկաց յաղօթս առ հայրն երկնաւոր †։ 'ի վախճան ամի կամեցաւ մեռանիլ՝ աղօթս առնելով․ զի մինչ էին 'ի խաչին, յետ աղօթելոյն վասն իւրոց խաչահանուաց, մեռաւ՝ ասելով․ 'ի ձեռս քո Հայր աւանդեմ զհոգի իմ ‡։ * Ղուկ․ 6․12։ † Մատ․ 26․39—44։ ‡ Ղուկ․ 23․46։

### Պտուղ՝ որ քաղի 'ի Մտածութենէ աստի

ա. Եթէ որդին այ փութաջան եղև առ օգուտ քո, զիա՞րդ չամաչես դու լինել հեղգ 'ի հոգևորս, որք ուղղին յօգուտ հոգւոյ քո։

բ. Զինչ օգուտ է քեզ լինել փութաջան 'ի ժամանակաւորս և յանցաւորս, եթէ հեղգ իցես յաղօթս, 'ի մեռուցմունս, 'ի ճգնութիւնս, և յայլ հոգևորական գործս։

Գ. Խորհեա եւ, եթէ 'ի քո առանձնական ջերմեռանդութիւնս ես ժրաջան, եւ 'ի պահպանութիւնս հրամանաց Այ . . հեղգ, կամ անհոգ։

Դ. Կամի՞ս լինել ժրաջան յիրս Այ. վառիր 'ի սէր նոցա. զի ըստ առաւելութեան սիրոյ քոյ առ նոսա, առաւելցի եւ քո փոյթ։ տես երես. 427—432։ 'ի Խրատք յաղագս Կրօնաւորական կատարելութեան. Թարգմանեալ 'ի Աւգէրեանց Վրթանէս Վարդապետէ։ տպեալ 'ի Վէնէտիկ. 1779։

---

## Այսպէս ասէ Տէրն մեր Յս̄ Քս̄

Մատթէոս. 24. 42. * Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ 43. * Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, սկէր՝ եւ ոչ տայր ական հատանել զտուն իւրոյ։ 44. * Վասն այսորիկ եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ։ 45. * Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր 'ի ժամու։ 46. * Երանի՛ է ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։

Մարկոս. 13. 33. * Զգոյշ եղերուք. սկեցէք եւ կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։ 34. * Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. եւ տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն, եւ իւրաքանչիւր զգործս իւր. եւ դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի։ 35. * Արդ՝ արթուն կացէք, զի ոչ գիտէք ե՞րբ տէր տանն գայցէ՝ յերեկորեայ եթէ 'ի մէջ գիշերի՝ եթէ 'ի հաւախօսի՝ եթէ ը̄ առաւօտ։ 36. * Գուցէ եկեալ հանկարծակի՝ գտանիցէ զձեզ 'ի քուն։ 37. * Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք։

Ղուկաս. 21. 34. * Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգովք աշխարհականօք, եւ յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն. 35. * զի իբրեւ զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ա̄մ երեսս երկրի։ 36. * Արթուն կացէք այսուհետեւ, յա̄մ ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յա̄մէ որ լինելոց է, եւ կալ առաջի որդւոյ մարդոյ։

Ղուկաս. 12. 37. * Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ը̄ մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ զն̄, եւ անցեալ պաշտիցէ զն̄։ եւն̄ 40. * Եւ դուք եղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ։ եւն̄. 43. * Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։

# ԳԻՐՔ ԵԼԻՑ

## ՈՐ ԱՍԻ ԸՍՏ ԵԲՐԱՅԵՑՒՈՑ

### ՎԷԵԼԼԷ ՇԷՄՕԹ

1 Գլ. ԺԹ։ Յամսեանն երրորդի ելանելոյ որդւոցն Ի͞լի յերկ-
րէն եգիպտացւոց. յաւուրն յայնմիկ եկին յանապատն Սինայ [1]։ *
2 Չուեցին ՚ի Ռափիդնայ, և եկին յանապատն Սինայի. և բանա-
կեցան յանապատի անդ. և բանակեցաւ Ի͞էլ անդ հանդէպ լեր-
3 ինն [2]։ * Եւ Մովսէս ել ՚ի լեառնն ա͞յ։ և կոչեաց զնա ա͞ծ ՚ի
լեռնէ անտի և ասէ. Այսպէս ասասցես տանն Յակոբայ, և պատ-
4 մեսցես որդւոցն Ի͞լի [3]։ * Դուք ինքնին տեսէք՝ որչափ ինչ արարի
ընդ եգիպտացիսն. և առի զձեզ իբրև ՚ի վերայ թևոց արծուոյ՝ և
5 յարեցի զձեզ առ իս [4]։ * Եւ արդ՝ եթէ լսելով լուիջիք ձայնի իմում,
և պահիցէք զուխտն իմ, եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական
6 յա͞մ ազգաց. զի իմ է ա͞մ երկիր [5]. * Եւ դուք եղիջիք ինձ ՚ի
թագաւորութիւն, և ՚ի քահանայութիւն՝ և յազգ ս͞ր։ զայս բանս
խօսեսցիս ընդ որդիսն Ի͞լի [6]։
7 * Եկն Մովսէս և կոչեաց զծերս ժողովրդեանն. և եդ առաջի
8 նոցա զա͞մ բանս զայսոսիկ զոր պատուիրեաց նմա ա͞ծ։ * Պատաս-
խանի ետ ժողովուրդն միաբանութեամբ, և ասեն. զամենայն ինչ զոր
ասաց ա͞ծ՝ արասցուք և լուիցուք։ Եւ տարաւ Մովսէս զպատգամս
9 ժողովրդեանն առ ա͞ծ [7]։ * Եւ ասէ տ͞ր ցՄովսէս. ահաւասիկ ես
եկից առ քեզ սեամբ ամպոյ, զի լուիցէ ժողովուրդն մինչ ես
ընդ քեզ խօսիցիմ. և հաւատասցեն քեզ յաւիտեան։ Եւ պատ-
մեաց Մովսէս զբանս ժողովրդեանն առ տ͞ր [8]։
10 * Եւ ասէ տ͞ր ցՄովսէս. էջ դու վկայեա ժողովրդեանն,
և սրբեա զնոսա այսօր և վաղիւ, և լուասցեն զհանդերձս իւրեանց [9]։ *
11 Եւ պատրաստեսցին աւուրն երրորդի։ զի յաւուրն երրորդի իջցէ
12 տ͞ր յանդիման ա͞մ ժողովրդեանդ ՚ի լեառնդ Սինա [10]։ * Եւ զատու-

---

[1] Թւ. 33. 15: [2] Ել. 17. 1. 6: 3. 1. 12: [3] Ել. 20. 21: Գոր. 7. 38: Ել. 3. 4: [4] 2. Օրէ. 29. 2: 32. 11: Ես. 63. 9: Յայ. 12. 14: [5] 2. Օրէ. 5. 2: 4. 20: 7. 6: 14. 2. 21: 26. 18: 32. 8. 9: 3. Թա. 8. 53: Սաղ. 134. 4: Եզկ. 8. 12: Ես. 41. 8: 43. 1: Եբր. 10. 16: Մաղ. 3. 17: Տիտ. 2. 14: Ել. 9. 29: 2. Օրէ. 10. 14: Յոբ. 41. 11: Սաղ. 23. 1:49. 12: 1. Կոր. 10. 26. 28: [6] 2. Օրէ. 33. 2—4: 1. Պետ. 2. 5. 9: Յայ. 1. 6: 5. 10: 20. 6: Ղևտ. 20. 24. 26: 2. Օրէ. 7. 6: 26. 19: 28. 9: Ես. 62. 12: 1. Կոր. 3. 17: 1. Թես. 5. 27: [7] Ել. 24. 3. 7: 2. Օրէ. 5. 27: 26. 17: [8] Հռոմ. 16: Ել. 20. 21: 24. 15. 16: 2. Օրէ. 4. 11: Սաղ. 17. 12. 13: 96. 2: Մատ. 17. 5: 2. Օրէ. 4. 12. 36: Յովհ. 12. 29. 30: Ել. 14. 31: [9] Ղևտ. 11. 44. 45: Եբր. 10. 22: Հռոմ. 14: Ծն. 35. 2: Ղևտ. 15. 5: [10] Հռոմ. 16: 16: Ել. 34. 5: 2. Օրէ. 33. 2:

ցես զժողովուրդդ շուրջ և ասասցես . զգոյշ կացէք անձանց յելա-
նելոյ 'ի լեառնն և մերձենալոյ առ նա . զի ամ որ մերձեսցի 'ի
լեառնն՝ մահու սատակեսցի [1]: * Մի մերձեսցի 'ի նա ձեռն . 13
քանզի քարամբք քարկոծեսցի և նետիւք խոցոտեսցի ; եթէ
անասուն իցէ և եթէ մարդ՝ մի կեցցէ : այլ յորժամ ձայնքն և
փողն և ամպն վերասցի 'ի լեռնէ անտի՝ ելցեն նոքա 'ի լեառնն [2] :
* Էջ Մովսէս 'ի լեռնէ անտի առ ժողովուրդն , և սրբեաց 14
զնոսա . և լուացին զձորձս իւրեանց [3]: * և ասէ ցժողովուրդն . 15
պատրաստ լերուք . զերիս աւուրս 'ի կանայս մի մերձենայք [4] :
* Եւ եղև յաւուրն երրորդի ընդ առաւօտն . ձայնք և փայլա- 16
տակունք և ամպ միգախառն 'ի վերայ լերինն Սինեայ լինէին . և
ձայն փողոյն հնչէր մեծաձայն ; Եւ զարհուրեցաւ ամ ժողովու-
րդն որ էր 'ի բանակի անդ [5]: * և եհան Մովսէս զժողովուրդն ընդ 17
առաջ Այ 'ի բանակէ անտի . և կացոյց շուրջ զստորոտով լերինն
Սինեայ [6]: * Եւ լեառն Սինա ծխէր առ հասարակ . քանզի իջեալ 18
կայր Ած 'ի վր նր հրով . և ելանէր ծուխ նորա իբրև զծուխ
հնոցի ; և զարհուրեցան ամ ժողովուրդն յոյժ [7] . * քանզի հասա- 19
նէին ձայնք փողոյն 'ի բաց , յաւաճեալք և սաստկացեալք յոյժ :
Մովսէս խօսէր՝ և Ած տայր նմա ձայն [8]: * Եւ էջ Տր 'ի լեառնն 20
Սինա , 'ի գլուխ լերինն ; և կոչեաց Տր զՄովսէս 'ի գլուխ լերինն .
և ել անդր Մովսէս : * Եւ խօսեցաւ Ած ընդ Մովսիսի և ասէ . 21
էջ , դիր վկայութի ժողովրդեանդ գուցէ մերձենայցեն հայել
առ Ած , և անկանիցին բազումք 'ի նոցանէ [9]: * և քահանայքն որ 22
մերձենան առ Ած՝ սրբեսցին . գուցէ սատակիցէ 'ի նոցանէ Տր [10]:
* Եւ ասէ Մովսէս ցԱծ . ոչ կարէ ժողովուրդն ելանել 'ի լեառնն 23
Սինա . զի դու ինքնին ուխտեցեր մեզ՝ և ասացեր . թէ զատուցես
զլեառնս և սրբեսցես զդա [11]: * Եւ ասէ ցնա Տր , Երթ էջ , և Ել 24
այսրէն դու և Ահարոն ընդ քեզ . բայց քահանայքն և ժողովու-
րդն մի՛ ժտեսցին ելանել առ Ած , գուցէ սատակիցէ 'ի նոցանէ
Տր : * Էջ Մովսէս առ ժողովուրդն՝ և ասէ ցնոսա : 25
Գլ. Ի: Խօսեցաւ Տր զամ զպատգամս զայսոսիկ՝ և ասէ [12]: 1
ա. * Ես եմ Տր Ած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց 2

---

[1] Եբր. 12. 20: [2] Հռովմ. 16: 19: [3] Հռովմ. 10: [4] Հռովմ. 11: 1. Թես. 21. 4. 5: Զաք. 7. 3: 1. Կոր. 7. 5: [5] Սաղ. 76. 19: Եբր. 12. 18. 19: Յայտ. 4. 5: 8. 5: 11. 19: Հռովմ. 9: Ելք. 40. 34: 2. Մնաց. 5. 14: Յայտ. 1. 10: 4. 1: Եբր. 12. 21: [6] 2. Օրէ. 4. 10: [7] 2. Օրէ. 4. 11:33. 2: Դատ. 5. 5: Սաղ. 67. 8.9: Եսա. 6. 4: Ամբ. 3. 3: Ելք. 3. 2: 24. 17: 2. Մնաց. 7. 1. 2. 3: Ծն. 15. 17: Սաղ. 143. 5: Յայտ. 15. 8: Սաղ. 67. 9: 76.19: 113. 7: Եբէ. 4. 24: Եբր. 12. 26: [8] Հռովմ.13: Եբր.12. 21: Նէե. 9.13: Սաղ. 80. 8: [9] Ելք. 3. 5: 1. Թա. 6. 19: [10] Ղեւտ.10. 3: 2. Թա. 6. 7. 6: [11] Հռովմ. 12: Յէս. 3. 4: [12] 2. Օրէ. 5. 22:

3 'ի տանէ ծառայութեան[1] ։ * մի՛ եղիցին քեզ այլ աստուածք
բաց յինէն[2] ։
4 Բ. * Մի՛ արասցես դու քեզ կուռս կամ զամենայն նմանութիւն . որ
ինչ յերկինս 'ի վեր, և որ ինչ յերկիր 'ի խոնարհ, և որ ինչ
5 ի ջուրս 'ի ներքոյ երկրի[3] ։ * մի՛ երկիրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա . զի ես եմ Տ̅ր Ա̅ծ քո՝ Ա̅ծ նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց, յերրիս և 'ի չորս ազգս ատելեաց
6 իմոց[4] ։ * և առնեմ զողորմութիւն 'ի հազար ազգս սիրելեաց իմոց, և
որք պահեն զհրամանս իմ[5] ։
7 Գ. * Մի՛ առնուցուս զանուն Տ̅ն Ա̅յ քոյ 'ի վերայ սնոտեաց
զի ոչ սրբեսցէ Տ̅ր զայն, որ առնուցու զանուն նորա 'ի վերայ
սնոտեաց[6] ։
8 Դ. * Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա[7] ։ * զվեց օր գոր-
9 ծեսցես, և արասցես զամենայն գործս քո[8] ։ * յաւուրն եւթներորդի
10 շաբաթ Տ̅ն Ա̅յ քում, մի՛ գործեսցես 'ի նմա զամենայն գործ քո դու
և ուստր քո և դուստր քո, ծառայ քո, և աղախին քո . եզն
քո և էշ քո, և ամենայն անասուն քո . և եկն քո և պանդուխտն քո
11 որ 'ի քեզ[9] ։ * Զի զվեց օր արար Տ̅ր Ա̅ծ զերկինս և զերկիր, և
զծով և զամենայն որ 'ի նոսա, և հանգեաւ յաւուրն եւթներորդի .
վասն այնորիկ օրհնեաց Տ̅ր զօրն եւթներորդ, և սրբեաց զնա[10] ։
12 Ե. * Պատուեա զհայր քո և զմայր քո . զի քեզ բարի
լինիցի, և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին բարութեան .
զոր Տ̅ր Ա̅ծ տացէ քեզ[11] ։
13 Զ. * Մի՛ սպանաներ[12] ։
14 Է. * Մի՛ շնար[13] ։
15 Ը. * Մի՛ գողանար[14] ։

---

[1] Ղևտ. 26. 1. 13: 2. Օրէ. 5. 6: Սաղ. 80. 11: Ովէ. 13. 4: Ել. 13. 3: [2] 2. Օրէ. 5. 7: 6. 14: 4. Թագ. 17. 35: Երէ. 25. 6: 35. 15: [3] Ղևտ. 26. 1: 2. Օրէ. 4. 16: 5. 8: 27. 15: Սաղ. 96. 7: [4] Ել. 23. 24: Յես. 23. 7: 4. Թագ. 17. 35: Եր. 44. 15. 19: Ել. 34. 14: 2. Օրէ. 4. 24: 6 15: Յես. 24. 19: Նաւ. 1. 2: Ել. 34. 7: Ղևտ. 20. 5: 26. 30. 40: Թւ. 14. 18. 33: 3. Թագ. 21. 29: Յոբ. 5. 4: 21. 19: Սաղ. 78. 9: 108. 4: Եր. 14. 20. 21: 65. 6. 7: Երէ. 2. 9: 32. 18: [5] Ել. 34. 7: 2. Օրէ. 7. 9: Սաղ. 88. 35: Հռ. 11. 28: [6] Ել. 23. 1: Ղևտ. 19. 12: 2. Օրէ. 5. 11: Սաղ. 14. 4: Մատ. 5. 33: Մրկ. 6. 11: [7] Ել. 31. 13. 14: Ղևտ. 19. 3. 30: 26. 2: 2. Օրէ. 5. 12: [8] Ել. 23. 12: 31. 15: 34. 21: Ղևտ. 23. 3: Եզէ. 20. 12: Ղու. 13. 14: [9] Ծն. 2. 2. 3: Ել. 16. 26: 31. 15: Նէե. 13. 16—19: [10] Ծն. 2. 2: [11] Ել. 23. 26: Ղևտ. 19. 3: 2. Օրէ. 5. 16: Երէ. 35. 7. 18. 19: Մատ. 15. 4: 19. 19: Մրկ. 7. 10: 10. 19: Ղու. 18. 20: Եփե. 6. 2: [12] 2. Օրէ. 5. 17: Մատ. 5. 21: Հռ. 13. 9: [13] 2. Օրէ. 5. 18: Մատ. 5. 27: [14] Ղևտ. 19. 11: 2. Օրէ. 5. 19: Մատ. 19. 18: Հռ. 13. 9: 1. Թեսս. 4. 6:

Թ. * Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ[1]։ 16
Ժ. * Մի՛ ցանկանար տան ընկերի քոյ, և մի՛ անդաստանի նորա։ 17
մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի՛ ծառայի նորա, և մի՛ աղախնոյ
նորա. և մի՛ եզին նորա, և մի՛ իշոյ նորա, և մի՛ ամենայն անասնոյ
նորա. և մի՛ ամենայն զինչ ընկերի քո իցէ[2]։
* Եւ ամենայն ժողովուրդն տեսանէր զձայնն և զճառա- 18
գայթսն, և զբարբառ փողոյն՝ և զլեառնն ծխեալ։ զահի հարա-
ւ ամենայն ժողովուրդն, և խորշեցաւ. եկաց 'ի հեռաստանէ[3]։ * Եւ ասեն 19
ցՄովսէս. դու խօսեաց ընդ մեզ՝ և լուիցուք. և մի՛ խօսեսցի ընդ
մեզ Աստուած՝ գուցէ մեռանիցիմք[4]։ * Եւ ասէ ցնոսա Մովսէս. քաջալե- 20
րեցարուք. զի վասն փորձելոյ զձեզ եկն առ ձեզ Աստուած. առ ի լինել-
ոյ երկիւղ նորա 'ի ձեզ. զի մի՛ մեղանչիցէք[5]։ * Եւ կայր ժողովու- 21
րդն 'ի հեռաստանէ. Եւ Մովսէս եմուտ 'ի մէգն ուր էր Աստուած[6]։ *
Եւ ասէ Տէր ցՄովսէս. այսպէս ասասցես դու տանդ Յակոբայ, և 22
պատմեսցես որդւոցդ Իսրայէլի։ դուք ձեզէն տեսէք, զի յերկնից
խօսեցայ ընդ ձեզ[7]։ * Մի՛ առնիցէք ձեզ աստուածս ոսկեղէնս և 23
աստուածս արծաթեղէնս[8]։ * Սեղան՝ հողեղէն արասջիք ինձ, 24
և մատուսջիք 'ի նմա զողջակէզս ձեր, և զփրկութիւնս ձեր,
զոչխարս ձեր, և զարջառս ձեր. յամենայն տեղիս ուր անուանեցից
զանուն իմ անդ. և եկից առ քեզ և օրհնեցից զքեզ[9]։ * Ապա 25
թէ սեղան 'ի քարանց առնիցես ինձ, մի՛ շինեսցես զնոսա կոփա-
ծոյս. քանզի զձեռին գործին քո մերձեցուցեր 'ի նա, և պղծեալ
է[10]։ * Մի՛ ելանիցես ընդ աստիճանս 'ի սեղան իմ, զի մի՛ մերկասցին 26
առականք քո 'ի վերայ նորա։ տես Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր
Կտակարանաց Հատոր Առաջին տպեալ 'ի Վենետիկ. 1805։

---

[1] Ել. 23. 1: 2. Օրէ. 5. 20: 19. 16: Մատ. 19. 18: [2] 2. Օրէ. 5. 21: Միք. 2. 2: Ամբ. 2. 9: Ղուկ. 12. 15: Գործ. 20. 33: Հռոմ. 7. 7: 13. 9: Եփե. 5. 3. 5: Եբր. 13. 5: Յոբ. 31. 9: Առակ. 6. 29: Երե. 5. 8: Մատ. 5. 28: [3] Եբր. 12. 18: Յայտ. 1. 10. 12: Ել. 19. 16: [4] 2. Օրէ. 5. 27: 18. 16: Գաղ. 3. 19. 20: Եբր. 12. 19: 2. Օրէ. 5. 25: [5] 1. Թագ. 12. 20: Եսայ. 41. 10. 13: Ծնն. 22. 1: 2. Օրէ. 13. 3: 4. 10: 6. 2: 10. 12: 17. 13. 19: 19. 20: 28. 58: Առակ. 3. 7: 16. 6: Եսայ. 8. 13: [6] Ել. 19. 16: 2. Օրէ. 5. 5: 1. Թագ. 8. 12: [7] 2. Օրէ. 4. 36: Նեէ. 9. 13: [8] Ել. 32. 1. 2. 4: 1. Թագ. 5. 4. 5: 4. Թագ. 17. 33: Եզե. 20. 39: 43. 8: Դան. 5. 4. 23: Սոփ. 1. 5: 2. Կոր. 6. 14—19: [9] Ղեւ. 1. 2: 2. Օրէ. 12. 5. 11. 21: 14. 23: 16. 6. 11: 26. 2: 3. Թագ. 8. 43: 9. 3: 2. Մնաց. 6. 6: 7. 16: 12. 13: 2. Եզր. 6. 12: Նեէ. 1. 9: Սաղ. 73. 7: Երե. 7. 10. 12: Ծնն. 12. 2: 2. Օրէ. 7. 13: [10] 2. Օրէ. 27. 5: Յես. 8. 31:

---

CALCUTTA: PRINTED AT THE BAPTIST MISSION PRESS, FOR THE AMERICAN RELIGIOUS TRACT SOCIETY.

1st Ed.] 1841. [1000 *Copies*.

Գիրք անյայտք կամ անկանոնք են ըստ Անգլիական Թարգմանութեան

| | | |
|---|---|---|
| 1. Եզրաս * - - - - 9 | Իմաստութիւն - - - - 16 | Պատմութիւն Շուշանայ |
| 2. Եզրաս † - - - - 16 | Եկլեսիաստիկոն - - - 51 | Բէլ կուռքն և վիշապն |
| Տովբիթ - - - - - - 14 | Բարուք հանդերձ - - . | Աղօթք Մանասէի |
| Յուդիթ - - - - - - 16 | Թուղթն Երեմիայ - - 6 | Առաջին Մակաբայեցւոց 16 |
| Մնացորդք Եսթերայ ‡ - - 6 | Երգ երից Մանկանց - - . | Երկրորդ Մակաբայեցւոց 15 |

Եւ Երրորդ Մակաբայեցւոց

* որ է Նախնեացն Եզրաս Երրորդ : և Հայոց Եզրաս Առաջին :
† որ է Հայոց Եզրաս Չորրորդ : ‡ որ է Հայոց Եսթերի 10. գլխէ 4. համարէն մինչև ·16. գլխոյ վերջն :

Հայոց Հին կտակարանն երկու Սաղմոս Տասն ունի : և ·113. Սաղմոսն · Երկու Սաղմոսէ : և և · 114. Սաղմոսն մին Սաղմոսէ · Երկու Սաղմոսէ շինեալ : Նմանապէս և ·147. Սաղմոսն մին Սաղմոսէ · այլ երկու Սաղմոսէ շինեալ : բէ Յամաքերպան գրոց Ածայրանին :

Իսկ անկանոնք են *անընդունելիք · և անարգեալ ք Յեկեղեցւոյ · որ-պիսի են՝* առաքելական Թուղթ · Կորնթ. մանկութեան Յիս· բէ երես ·214: Ճեմարան Գրքեկեաց բէդ երկրորդ ՚ի Վէնէտիկ ·1818:

Եւ ՚ի Պարգևտանց ժողովն ապաեալ ՚ի Սեն Կաթողիկէ՝ ՚ի մեր Թուին · 768· յորինակ ինչ ՚ի 25 կանոնին՝ Թեպէտ ըստ բուլ Սորբ Գիրք ոչ բանէ (Սիրաք) Բայց օրինակի ընթեռնուլ առ ՚ի ուսումն մանկանց : բէ երես ·192· Նորէն Ալզոթեցու ծմամբ ... բդեալ ՚ի Վէնէտիկ ·1801:

Յաւելուած

Սերոբ : Խօսք Սերոբայ : Երգ երգոց : Աղօթք Մանասէի : Թուղթ Կորնթացւոց առ Պաւղոս : Հանգիստ Յովհաննու : Աւետ Եւթաղ : բէ Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց Հայոց Ազգին · Նախաբանութեան առ վերծանօղին · երես · 31· բդեալ · ՚ի Վէնէտիկ · 1805: Եւ Հայոց · ամծք · և է Սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ Թուոց : Եւ և Չորրորդ յաւելուած ՚ի բէդ վերջոյ առնել զԹուղթն Կորնթացւոց առ Պաւղոս առաքեալ, հանդերձ պատասխանեաւ Նորին առաքելոյ . . . ՚ի պարգամացութեան Խորենացւոյն բդագրեցին ՚ի Լ. . . Յամին ·1736: բէ ՚ինոյն Ածաշնչի Հայոց երրորդ երես ·138: Եւ Հայոց չորրորդ երես· 2· ՚ի Յաւելուած Ածաշունչ մատենին :

Այս առաջնութեան : կտակարանաց իբրև աղաւաղեալ ձեռին · անյայտքն գրոց · · զի կարծեցուք գիրքն՝ զինչ ինչ արդեօք աղօթից ապաէ՝ ՚ի մեզ ծածկելոյն գուբէլ : Ապաքէն Իմաստութիւնն · որ ՚ի յուշ-վերջ Սաղմոսի ընթացիկ : Եւ Յեսուայ որդւոյ Սիրաքայ Գիրք՝ և Յուդ-իթ· և Տովբիթ· և պատոյ · ոչ են նոյ կանոնաւ : բէ երես · 746· ՚ի Հին և Նոր կտակարանն բդեալ Յամաքերպան · ՚ի Թուական փրկչին · 1666: Իսկ Հայոց · ամծք : են մարն և և բէ ·13· բերբանի երես · 8·

THE

NAMES AND ORDER

OF ALL THE

# BOOKS OF THE OLD AND NEW TESTAMENTS,

WITH

THE NUMBER OF THEIR CHAPTERS.

---

Անուանք և կարգ Ամենայն Գրոց Հին և Նոր Կտակարանի Համարելով
Թուով Գլխոց Նոցա Ըստ Անգլիական Թարգմանութեան :

---

*The Books of the Old Testament.*

Գիրք Հին Կտակարանի

| | | |
|---|---|---|
| Ծննդոց անուն Գրքոյ. 50 | 2.Ժամանակագրութեան. 36 | Դանիէլ Մարգարէ - - 12 |
| Ելք - - - - - - - - 40 | Եզրայ (Հայոց. 2. Եզրաս) 10 | Ովսէայ - - - - - - - 14 |
| Ղեւտացւոց - - - - - 27 | Նեեմիայ (Հայոց. 3. Եզրաս) 13 | Յովելայ - - - - - - 3 |
| Թուոց - - - - - - - 36 | Եսթեր - - - - - - - 10 | Ամովսայ - - - - - - 9 |
| Երկրորդ Օրինաց - - - 34 | Յոբ - - - - - - - 42 | Աբդիու - - - - - - 1 |
| Գիրք Յեսուայ - - - 24 | Սաղմոսք Դաւթի - - - 150 | Յովնան - - - - - - 4 |
| Դատաւորաց - - - - - 21 | Առակք Սողոմոնի - - - 31 | Միքիայ - - - - - - 7 |
| Հռութ - - - - - - - 4 | Եկկլեսիաստէս - - - 12 | Նաւումայ - - - - - - 3 |
| Առաջին Սամուէլ - - 31 | Երգ Սողոմոնի - - - - 8 | Ամբակումայ - - - - - 3 |
| Երկրորդ Սամուէլ - - 24 | Եսայի Մարգարէ - - - 66 | Սոփոնիայ - - - - - 3 |
| Առաջին Թագաւորաց - 22 | Երեմիայ - - - - - - 52 | Անգեայ - - - - - - - 2 |
| Երկրորդ Թագաւորաց - 25 | Ողբք - - - - - - - 5 | Զաքարիայ - - - - - 14 |
| 1.Ժամանակագրութեան - 29 | Եզեկիէլ - - - - - - 48 | Մաղաքիայ - - - - - 4 |

---

*The Books of the New Testament.*

Գիրք Նորոյ Կտակարանի

| | | |
|---|---|---|
| Մատթէոսի անուն Գրքոյ - 28 | Թուղթ առ Եփեսացւոց - 6 | Թուղթ առ Եբրայեցիս - 13 |
| Մարկոս - - - - - - 16 | Փիլիպպեցւոց - 4 | Յակոբայ - - - - - - 5 |
| Ղուկաս - - - - - - 24 | Կողոսացւոց - 4 | Առաջին Պետրոսի - - - 5 |
| Յովհաննու - - - - - 21 | Առաջին Թեսաղոնիկեցւոց 5 | Երկրորդ Պետրոսի - - 3 |
| Գործք Առաքելոց - - 28 | Երկրորդ Թեսաղոնիկեցւոց 3 | Առաջին Յովհաննու - - 5 |
| Թուղթն առ Հռոմայեցիս 16 | Առաջին Տիմոթէոսի - - 6 | Երկրորդ Յովհաննու - - 1 |
| Առաջին Կորնթացւոց - 16 | Երկրորդ Տիմոթէոսի - - 4 | Երրորդ Յովհաննու - - 1 |
| Երկրորդ Կորնթացւոց - 13 | Տիտոսի - - - - - - 3 | Յուդայ - - - - - - 1 |
| Թուղթ առ Գաղատացւոց 6 | Փիլիմոնի - - - - - - 1 | Յայտնութեան - - - - 22 |